ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ՆՈՐԱՅԱՅՏ ՁԵՌԱԳԻՐԸ. ՂԱՐԱԲԱՂԻ ԵՒ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐ

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ
karine.rafaelyan@mail.ru

Քանի որ 2012ին լրանում էր հայ գրականութեան դասական Դերենիկ Դեմիրճեանի ծննդեան 135ամեակը, նրա տուն-թանգարանը ցանկանում էր ընթերցողին նուէր անել այդ առթիւ՝ տպագրելով նրա քիչ յայտնի գործերից մէկը՝ *Արջուկ-Լրջուկ* չափածոյ հեքիաթը, որը Հայաստանում միակ անգամ տպագրուել է 1946ին[1]՝ այն օրերի համար բաւական տպաւորիչ հրատարակութեամբ: Հեքիաթի բնագիրը գտնելու յոյսով մէկ անգամ եւս աչքի անցկացրինք Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանում (ԳԱԹ) պահպանուող Դեմիրճեանի ֆոնդի նիւթերը, սակայն մեզ հետաքրքրող ոչինչ չգտանք այդ ստեղծագործութեան վերաբերեալ: Փոխարէնը բարեբախտութիւն ունեցանք յայտնաբերելու մէկ այլ ձեռագիր[2], որը, փաստօրէն, տասնամեակներ շարունակ սեւագրութիւնների բաժնում խնամքով թաքցուած է եղել խորհրդային գրաքննիչների ամենատես աչքից:

Անսպասելիօրէն գտնուած այդ նիւթը 24 էջից բաղկացած մի ձեռագիր է, որը Դեմիրճեանի արխիւի լրացուցիչ մասն ամփոփող գրանցամատեանում զետեղուած է «Յօդուածներ, Ելոյթներ Եւ Զանազան Գրառումներ» բաժնում՝ «Ղարաբաղի Եւ Նախիջեւանի Հարցի Շուրջ Իր Դատողութիւնները. Սեւագրութիւններ» նկարագրութեամբ:

Ձեռագիր թերթիկները համակարգել եւ ԳԱԹին է յանձնել ԳԱԹ Գրական-Յուշային Բաժնի վարիչ Պարգեւուհի Սիմոնեանը, 1972ին:

Առաջին հայեացքից անծանօթ այդ ձեռագիրը մեզ մղեց նոր փնտրոտուքների: Թէեւ վստահ էինք, որ նման նիւթ երբեւէ չի հանդիպել ո՛չ գրողի երկերի ակադեմիական հրատարակութեան 14 հատորներում, ո՛չ պարբերական մամուլում, այնուամենայնիւ, եւս մէկ անգամ թերթեցինք Դեմիրճեանի տուն-թանգարանում, ԳԱԹում եւ Հայաստանի Ազգային Գրադարանում պահպանուող գրքերն ու պարբերականները, հարցուփորձ արեցինք Դեմիրճեանով զբաղուած տարբեր գրականագէտների (Արշակ Մադոյեան, Մարգարիտ Խաչատրեան, Վահագն Սարգսեան, Ռոբերտ Դաւթեան) եւ համոզուեցինք, որ ձեռագիրն իսկապէս անտիպ է: Նշուած գրականագէտներից միայն Դաւթեանն էր տեղեակ ձեռագրի գոյութեանը: Երբ 1980ականներին նա աշխատելիս է եղել իր թեկնածուական թեզի վրայ, ԳԱԹի Դեմիրճեանի ֆոնդում տեսել է այս նիւթը, սակայն

այն տարիներին, բնականաբար, զանց է արել այդ թեմային անդրադառնալու միտքը, քանի որ նման քայլը կարող էր քաղաքական իմաստով խոչընդոտ հանդիսանալ ապագայ թեզի պաշտպանութեան:

Նորայայտ ձեռագրի կազմին Դեմիրճեանը կատարել է հետեւեալ գրառումը. «Ամէնօրեայ Խառն Նոթեր (Աւելի՝ Լեզուական)»: Եւ միայն ներքեւում ռուսերէն աւելացրել է՝ «Karabag»:

Դեմիրճեանի նման զգուշաւոր, շրջահայեաց մարդը, միանգամայն հասկանալի է, որ պիտի խուսափէր խօսուն վերնագրից, ինչն իսկոյն կը մատնէր այդ գրառումների բուն էութիւնը, քանզի 1950ականների կէսերից Խորհրդային Միութեան տարածքում սկսուած «ձնհալի»[3] պայմաններում անգամ փոքր չէր համապատասխան գերատեսչութիւնների ուշադրութեան կենտրոնում յայտնուելու վտանգը:

Թէեւ ձեռագիրը տարեթիւ չի կրում, սակայն մենք հակուած ենք մտածել, որ այն գրուել է 1954ին: Դրա համար ունենք բաւարար հիմքեր:

1954ին ողջ Խորհրդային Միութեան առումով տօնւում էր Ուկրաինայի՝ Ռուսաստանի հետ վերամիաւորման 300ամեակը[4]: Այս իրադարձութիւնը լայնօրէն լուսաբանւում էր խորհրդային մամուլի՝ Ապրիլից Յունիս ընկած ժամանակահատուածի բոլոր թողարկումներում: Իհար-կէ, բացառութիւն չէր նաեւ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնը (ՀԽՍՀ): Ողջոյնի եւ շնորհաւորանքի ուղերձներով լի էին հայկական բոլոր պարբերականները: Եղբայրական սլաւոն ժողովուրդների վերամիաւորման փաստին արձագանգում եւ ողջոյնի խօսքեր էին յղում աշակերտական, աշխատաւորական խաւի ներկայացուցիչները, զինուորականները, ՀԽՍՀ պետական ղեկավար մարմինները, ինչպէս եւ ժամանակի այնպիսի նշանաւոր մտաւորականներ եւ արուեստագէտներ, ինչպիսիք էին Դեմիրճեանը, ռեժիսոր Վարդան Աճէմեանը, ճարտարապետ Ռաֆայէլ Իսրայէլեանը, կոմպոզիտոր Արամ Սաթեանը, նկարիչ Գաբրիէլ Գիւրջեանը եւ այլք:

Մամուլի հրապարակումների մէջ քիչ չէին նաեւ նշուող իրադարձութեանը հայ գրողների ձօնած չափածոյ գրուածքները, որոնք թէեւ չէին փայլում գեղարուեստական որակներով, բայց եւ այնպէս յաւուր պատշաճի լուծում էին խորհրդային ղեկավարութեան առաջադրած կամաւորպարտադիր խնդիրը՝ անմասն չմնալ խորհրդային ցանկացած հանրապետութեան կեանքում առկայ որեւէ իրադարձութեանը, եղբայրական համերաշխութեան ոգով արձագանգել մեծ թէ աննշան երեւոյթի, որն առնչւում է խորհրդային մեծ հայրենիքի այս կամ այն հատուածին:

Այսպէս, *Սովետական Հայաստան* թերթի 1954 Մայիսի 22ի թիւ 120 (10115) համարում Գէորգ Էմինը տպագրել է «Չափածոյ Խօսք՝ Բոգդան Խմելնիցկուն» բանաստեղծութիւնը՝ «Ուկրաինացի Բանաստեղծ Պլատոն Վորոնկոյին»[5] յղումով:

Կարմիր Զինուոր թերթի 1954 Մայիսի 23ի թիւ 62ում այս յոբելեանին առնչուող բազում անդրադարձների մէջ տեղ է գտել Մկրտիչ Կորիւնի «Զօներգ» բանաստեղծութիւնը՝ «Եղբայրական Ուկրաինային» յոդուածով:

Իսկ ի՞նչ էր գրում ինքը՝ Դեմիրճեանը, որի հրապարակումները եւս՝ նուիրուած Ռուսաստանի եւ Ուկրաինայի վերամիաւորման պատմական փաստին, տպագրուել են վերը յիշատակուած *Սովետական Հայաստան, Կարմիր Զինուոր*, ինչպէս եւ *Պիոնէր Կանչ* թերթերում:

*Պիոնէր Կանչ*ի 1954 Մայիսի 26ի թիւ 42 (1706)ում կարդում ենք. *«Բոցավառ ողջո՛յն ազատարար, հզօր Ռուսաստանին եւ կորովի Ուկրաինային՝ մեծ ու կրտսեր հսկաներին:*

Թող յաւե՛րժ ապրեն այդ երկու մեծ ժողովուրդները՝ Սովետական Միութեան ուժի, յոյսի, երջանկութեան պաշտպանները»:

*Սովետական Հայաստան*ի 1954 Մայիսի 22ի թիւ 120ում տպագրւում է նրա «Մեծ Բարեկամութիւն» յոդուածը[6], որտեղ ասուած է. *«Ռուս-ուկրաինական բարեկամական կապը նոր օժանդակ ուժ տուեց երկուսի էլ հզօրութեանը, տուեց միացեալ ուժերի նոր նշանակութիւն, ուժերի գումարման այն անսպառ հնարաւորութիւնը, որը հիմք ու պայման ստեղծեց ՍՍՌՄ մնացած բոլոր ժողովուրդների միացման համար..*

Երբեք Ուկրաինան այսքան լիովին չէր մեծացել իր բաժան-բաժան եղած մասերի միաւորումով»:

Այստեղ անհրաժեշտ է մէկ անդրադարձ եւս կատարել Դեմիրճեանի թողած գրաւոր ժառանգութեանը. «Մեծ Բարեկամութիւն» վերնագրով մէկ այլ յոդուած նոյնպէս գրել է Դեմիրճեանը՝ նուիրուած Անդրկովկասը Ռուսաստանին միանալու յոբելեանին: Այն տպագրուած է նրա երկերի ակադեմիական հրատարակութեան վերջին հատորում[7]:

Կարծում ենք՝ հայերէնի բառագանձին լաւատեղեակ գրողը դժուարութիւն չի ունեցել 1954ին գրած յոդուածի համար մի նոր վերնագիր ընտրելու հարցում: Սակայն նրա միտումն էր ցոյց տալ սլաւոն եւ հայ ժողովուրդների պատմական ճակատագրերի եւ դրանց հանգուցալուծումների ընդհանրութիւնները: Այդ միտումն արտայայտուել է նաեւ երկու պատմական իրողութիւններին անդրադարձող յոդուածներին միեւնոյն վերնագիրը տալու փաստով:

Յոդուածում մասնաւորապէս կարդում ենք. «*1828 թիւը նշանաւորուեց այն մեծ պատմական ակտով, որ Անդրկովկասի վերջին մարզը՝ Հայաստանը, միացաւ Ռուսաստանին եւ Թիւրքմենչայի դաշնագրով՝ մտաւ նրա տիրապետութեան տակ: Սրանով Անդրկովկասը թէ՛ աշխարհագրական դիրքով եւ թէ՛ ազգային, էթնոգրաֆիական կազմերով ամբողջացաւ եւ ձեւաւորուեց ու մտնելով Ռուսաստանի պետական սիստէմի մէջ՝ սկսեց նորոգուել եւ զարգանալ, իր յետեւ թողնելով միջ-*

նադարեան, կիսանիշխանական, անվերջ ասպատակութիւնների եւ կամայականութեան պատմութիւն»[8]:

Յիշատակուող Թուրքմենչայի Պայմանագրով (կնքուած 1828 Փետրուարի 10ին) Ռուսաստանի տիրապետութեան տակ են անցել Երեւանի եւ Նախիջեւանի նախկին խանութիւնները, ինչպէս եւ ամբողջ Կովկասը:

Պատմական այս ակտը Դեմիրճեանը որակել է որպէս հայ ժողովրդի կեանքում պատահած բախտորոշ իրադարձութիւն: Յիշեալ յօդուածում այս մասին նա գրում է. «*Հայ ժողովուրդը առանձին պատճառներ ունէր Ռուսաստանի միացման գործում ակտիւ դեր կատարելու: Եւ հայ ինտելիգենցիայի ներկայացուցիչները, կուլտուրայի գործիչները հայ ժողովրդի հետ միասին շարունակել եւ հիմնաւորել են Ռուսաստանի միացման իմաստաւորութիւնը*»[9]:

Դեմիրճեանը Ղարաբաղի եւ Նախիջեւանի հարցն արծարծող իր ձեռագրի վերջին էջի վրայ նշել է թուարկուած պարբերականների անունները եւ համապատասխան համարները, իհարկէ, ոչ պատահաբար: Հասկանալի է, որ նա ցանկանում էր այսպիսով յուշել, որ Հայաստանը եւս, Ուկրաինայի եւ Ռուսաստանի օրինակով, կարող է վերամիաւորուել իր էթնիկական ամբողջութեան մաս կազմող ժողովրդով՝ հայերով բնակեցուած տարածքների հետ՝ չխախտելով հանդերձ խորհրդային գաղափարախօսութեան եւ կարգախօսների ընդունուած սահմանները:

Երբ ծանօթանում էինք Դեմիրճեանի վերոյիշեալ հրապարակումներին, մեր ուշադրութիւնը գրաւեց *Սովետական Հայաստան* թերթի 1954 Մայիսի 21ի 119 (10114) համարում «Ռուսաստանի Հետ Ուկրաինայի Վերամիաւորման 300-Ամեակի Առթիւ» խորագրի ներքոյ տպագրուած՝ պատմագիտութեան դոկտոր, պրոֆեսոր Վարդան Պարսամեանի յօդուածը՝ «Պատմական Մեծ Ակտը» վերնագրով: Դեմիրճեանի ձեռագրում նշուած է նաեւ թերթի այս համարը, եւ կարծում ենք, հենց այս յօդուածի առնչութեամբ: Պարսամեանը հրապարակման մէջ իր պատմական պտոյտն սկսում է 1654ից, երբ բոլշեւիկների առաջնորդ, ԽՍՀՄի հիմնադիր Լենինի բնորոշմամբ, վերջ է դրուել ե՛ւ բնակավայրով, ե՛ւ լեզուով, ե՛ւ բնաւորութեամբ, ե՛ւ պատմութեամբ միմեանց չափազանց մօտ, արիւնակից երկու ժողովուրդների՝ ռուսների եւ ուկրաինացիների բաժանմանը: Յիշատակւում է 1648-54ի ուկրաինացիների ազգային-ազատագրական պատերազմը, խօսւում զօրավար Բոգդան Խմելնիցկու դերի մասին այդ պատերազմում, մատնանշւում նրա նպատակը՝ վերականգնել երբեմնի Կիեւեան Ռուսիայի ամբողջականութիւնը, ազատագրուած տեսնել ուկրաինացիներին թաթար-մոնղոլական, գերմանական, շուէդական, լիտուական, լեհական, հունգարական, թուրքական զաւթիչների լծից:

«*Մոսկուան դարձաւ այն կենտրոնը,*- գրում է պատմաբանը,- *որի հետ իրենց ազատագրութեան յոյսերն էին կապում ոչ միայն ուկրաի-*

նացիներն ու բելոռուսները, այլեւ օտար նուաճողների լծի տակ հեծող մեր Հայրենիքի եղբայրական միւս ժողովուրդները»:

Յօդուածագիրն այնուհետ սահուն անցում է կատարում դէպի հայ պատմութիւնն ու զուգահեռներ տանում Խմելնիցկու եւ Իսրայէլ Օրու[10] միջեւ՝ նշելով, որ վերջինս եւս, Խմելնիցկու նման, Հայաստանի յետագայ գոյութիւնն ու զարգացումը կապում էր Ռուսաստանի հետ:

Կասկածից վեր է, որ Դեմիրճեանի ձեռագրում *Սովետական Հայաստան* թերթի այս համարի յիշատակումը որոշակի ուղերձ էր պարունակում եւ ունէր որոշակի հասցէատէր կամ հասցէատէրեր:

Բացի այս, Ղարաբաղի եւ հայութեան ճակատագրին շուրջ գրառումներ կան գրողի երկերի ակադեմիական հրատարակութեան 14րդ հատորում՝ «Օրագրեր»ում արուած 1954 Մարտի 12ին եւ 1955ի Մարտի 11ին:

Ահա դրանք.- «*1954, Մարտ, 12: Հանդիպում ընկ. Միկոյեանի*[11] *հետ: Միտք տուի՝ Անդրկովկասեան պատմութիւնը, 15-21 թիւը, Բաքուի դէպքերը*[12]*: Ստոյգ պատմութիւնը: Խօսեցի նացիոնալիզմի*[13] *զրպարտութեան մասին, դրա պատուէրի մասին, որ գալիս է հեռուից:*

Նա խօսեց Բագիրովի[14] *մասին, անուանեց աւազակ, աւանտիւրիստ*[15]*, լաւ արտայայտուեց Սահակ Տէր-Գաբրիէլեանի*[16] *եւ Խանջեանի*[17] *մասին*»[18]:

«*1955, Մարտ, 11: …Մեզ պէտք են անտառներ, իսկ դրանք Ղարաբաղում են:*

Da khanit gospod bog Armeniu[19]»[20]:

Այս փաստերը վկայում են, որ 1950ականներին, այնուամենայնիւ, սկսուել էին քիչ թէ շատ բարենպաստ ժամանակներ, երբ կարելի էր - եթէ ոչ բարձրաձայն, ապա գոնէ կիսաձայն - խօսել ազգային խնդիրների մասին: Հետեւաբար, Դեմիրճեանը հենց այդ ժամանակահատուածում պիտի վճռէր թղթին յանձնել իրեն այնքան անհանգստացնող խոհերը՝ թէկուզ եւ քօղարկելով դրանք խաբուսիկ վերնագրի ու խորագրի ներքոյ:

Դեմիրճեանն իր դատողութիւններն սկսում է հարցով. «*Ի՞նչ բան է <u>'Ղարաբաղը</u>*'»: Ու ինքն էլ պատասխանում է իր հարցին՝ նկատելով, թէ Ղարաբաղի հարց գոյութիւն չունէր մինչեւ 1918: Այն 1918ին ստեղծուեց՝ տաճիկ հրամանատարութեան դրդմամբ եւ Ալեքսանդր Խատիսովի[21] անմիջական մասնակցութեամբ: Եւ դա յատուկ նպատակներ հետապնդող պատուէր էր, իբրեւ թէ՝ ժամանակաւոր:

Իրաւացիօրէն կասկածի տակ առնելով այդ պատուէրի ժամանակաւոր լինելը՝ Դեմիրճեանն իր շարադրանքում մի քանի անգամ յիշատակում է Նարիմանովի[22]՝ Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու առաջարկի եւ դրա անհիմն մերժման փաստը: Դատողութիւնները նրան յանգեցնում են այն եզրակացութեանը, որ Ղարաբաղը պէտք է Տաճկաստանին ու Ադրբեջանին: Մինչդեռ խորհրդային գաղափարաբանութիւնը

թելադրում է, որ Ղարաբաղը պէտք է վերադարձնել իր նախկին կարգավիճակին, վերամիաւորել իր էթնիկական ազգակցի՝ Հայաստանի հետ:

Խորհրդային գաղափարախօսութեանը, լենինեան սկզբունքներին, հայերի՝ ռուսական կողմնորոշմանն անդրադարձները եւ դրանց լոյսի ներքոյ հայ ժողովրդի յետագայ ճակատագրի արծարծումները Դեմիրճեանին զբաղեցրել են ոչ միայն այս նիւթում: Նա իր բազում հրապարակային ելոյթներում ու յօդուածներում է շեշտադրել այս մօտեցումները՝ նպատակ ունենալով իր ժողովրդի խնդիրների համար շահեկան լուծումների հասնել՝ դրանք հիմնաւորելով իր ժամանակի ու պետութեան չափանիշներին յարիր բանաձեւումներով:

«Դատողութիւններ»ում հանգամանօրէն խօսւում է հայ ժողովրդի՝ ռուս բոլշեւիկներին ցուցաբերած օժանդակութեան, Բաքուի վեցամսեայ հերոսական մարտերում ունեցած մասնակցութեան, մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը Ռուսաստանի կազմում երկու առանձին պետութիւններով ապրելու փաստերի մասին: Այսկերպ Դեմիրճեանը փորձում էր խորհրդային ղեկավարութեան գիտակցութեանը հասցնել այն ճշմարտութիւնը, որ հայերի հանդէպ տաճկական թշնամանքը գերազանցապէս պայմանաւորուած է հայերի ռուսական կողմնորոշմամբ: Ձեռագրում կարդում ենք, թէ Ղարաբաղն անգնահատելի ծառայութիւն է մատուցել Բաքուին եւ ռուսական գաղափարին, մեծապէս սատարել է ռուսների ընդհանուր գործին Անդրկովկասում, եղել նշանակալից օժանդակ ուժ Բաքուի, Ղարաբաղի, Զանգեզուրի դիմադրութիւնների ժամանակ:

Այդուհանդերձ, Դեմիրճեանը յստակ գիտակցում էր, որ խորհրդային ոչ մի կարգախօս ու հիմնաւորում ադրբեջանցիներին երբեւէ չի ստիպի ինքնակամ վերադարձնել Ղարաբաղը: Քանզի իր համոզմամբ՝ Ղարաբաղը Զանգեզուրի թիկունքն է տաճիկների համար, հետեւաբար այդ թիկունքը թուլացնելով է, որ պիտի ծնկի բերեն անառիկ Զանգեզուրը:

Դեմիրճեանը, անտեսելով ամեն վտանգ ու սպառնալիք, որոնց հետ պէտք էր հաշուի նստել իր ապրած ժամանակներում, համարձակօրէն անդրադառնում է յստակ փաստերին, իրերը կոչում իրենց անուններով: Նա համոզիչ կերպով ընդդիմանում է այն փաստարկներին, թէ տաճկական կառավարութեան՝ հայերի դէմ հալածանքներն ու ֆիզիկական հաշուեյարդարը պայմանաւորուած էին հայերի անհնազանդութեամբ:

Գրող վերլուծաբանը կարծում է, որ Ղարաբաղը եւ Նախիջեւանը Թուրքիայի բռնատիրութեան խորհրդանիշներն են Արեւելքի նկատմամբ, իր խօսքով՝ «նրա պլացդարմը»[23]:

Ուստի պէտք էր հիմնաւորապէս ամրացնել այդ զինադաշտը, դարձնել լիովին ապահով եւ անվտանգ: Իսկ ի՞նչ խոչընդոտներ պիտի ծագէին այդ սեւ ծրագիրն իրագործելու ճանապարհին՝ տաճկական զաւթիչների համար. միակ դժուար յաղթահարելի խոչընդոտը եղել եւ մնում էր իր

բնօրրանում ապրող հայ ժողովուրդը, որի հաւաքական կերպարը լաւագոյնս արտացոլուած է դեռեւս 1920ին Դեմիրճեանի գրած «Հայը» խոհագրութիւնում. «*Ոչինչ չեմ ուզում ձեզնից,- ասում է նա իր նեղիչներին,- ձեզ լինի ձեր լուծը, ձեզ լինի ձեր երջանկութիւնը, գնացէ՛ք, ապրեցէ՛ք խաղաղ ու երջանիկ: Եթէ դուք սիրում էք կեանքը, ես սիրում եմ կեանքից աւելի թանկ բանը – Ազատութիւնը…*»[24]: Եւ ուրեմն՝ պէտք էր վերացնել ազատատենչ այդ ժողովրդին՝ ո՛չ միայն ֆիզիկապէս բնաջնջելով, այլեւ սպանելով հոգին, էութիւնը, տեսակը:

Այս էր պատճառը, որ Ղարաբաղի ու Նախիջեւանի երիտասարդութեանն արգելուած էր բարձրագոյն կրթութիւն ստանալ մայրենի լեզուով, մի փաստ, որը պիտի յանգեցնէր ազգային ինքնութեան անխուսափելի կորստի, ադրբեջանական զանգուածի հետ ձուլման: Մի փաստ, որի դէմ չէր կարող չընդվզել մտածող հայ մարդը:

Այս ցաւագին իրողութիւնները եւ դրանց անխուսափելի հետեւանքները գիտակցող գրողը ցանկացել է մտաւորականի իր պարտքը կատարել եթէ ոչ խորհրդային բարձր ամբիոններում հնչեցրած ելոյթների ձեւով, ապա գոնէ ինքն իր հետ առանձնացած, իր գրասեղանի առջեւ թղթին յանձնելով իրեն հանգիստ չտուող դատողութիւնները:

Հայերի հանդէպ կիրառուող պատժամիջոցների մասին արդարացումները, դրանք հայերի անհնազանդութեանը վերագրելու սին հաւաստիացումները, բնականաբար, չեն համոզում Դեմիրճեանին, եւ չէին կարող համոզել տրամաբանելու ունակ որեւէ մէկին: Նա հասկանում ու փորձում է հասկացնել, որ հայերի համար չկայ որեւէ ելք, փրկութիւն՝ ստեղծուած կացութեան մէջ: «*Ես վստահ եմ,*- գրում է նա,- *որ ինչքան էլ հայերը սեղմուեն, չի դադարելու ճնշումը, չի դրուելու սահման նրանց 'սահմանաւորման': Նրանց կը ճնշեն մինչեւ բնաջնջում*»:

Եւ դարձեալ յղում, յամառ յիշեցում, յուշում՝ ուղղուած ռուսական ականջին: Ըստ Դեմիրճեանի՝ Ռուսաստանի համար աւելի հզօր յենասիւն կը ստեղծուի Անդրկովկասում, եթէ Ղարաբաղը եւ Նախիջեւանը միանան Հայաստանին, քանի որ խորհրդայնացումից յետոյ այդ տարածաշրջանում ակնյայտօրէն ուժեղացել է հայ, վրացի եւ ադրբեջանցի բուն ժողովուրդների համակրանքը դէպի ռուս ժողովուրդը:

Դեմիրճեանն իր դատողութիւններում մէկ անգամ չէ, որ ընդգծում է այն ճշմարտութիւնը, թէ խնդիրը ոչ թէ զուտ հայկական, այլ համակովկասեան, ռուսական, աւելին՝ համամիութենական է, ուստի պէտք է այն դիտարկել առաւել ընդգրկուն պարունակով:

Այս վերջին մտքի վրայ Դեմիրճեանը կանգ է առնում բաւական հանգամանօրէն. նա կասկածի տակ է առնում ժողովուրդների եւ քաղաքական վերնախաւի վերաբերմունքի, դիրքորոշման ընդհանրութիւնը: Դեռ 1953ին գրուած նրա մի ելոյթում՝ «Ժողովուրդների Եղբայրութեան Դրո-

շակակիրը» վերնագրով, արծարծում էր հայ-ադրբեջանական ժողովուրդների բարեկամութեան հարցը: Ելոյթը նուիրուած էր ադրբեջանցի գրող Միրզա Ֆաթալի Ախունդովի[25] մահուան 75ամեակին, եւ Դեմիրճեանը, օգտագործելով պատեհ առիթը, իր խօսքում վկայակոչել է երկու ժողովուրդների համակեցութեան, փոխըմբռնման կարեւոր դրսեւորումները, փորձել դիւանագիտօրէն արդարացնել ազգայնականութեան մէջ մեղադրուող իր ժողովրդի միանգամայն բնական ու հասկանալի մղումները դէպի սեփական ինքնութեան գիտակցումն ու ազգային արժէքների պանծացումը: Իր տեսակէտը նա հիմնաւորել է խորհրդային կարեւորագոյն կարգախօսին՝ ինտերնացիոնալիզմին անդրադարձով: «*Որովհետեւ չկայ ոչինչ, որ ինտերնացիոնալ կարողանայ դառնալ, եթէ նախ եւ առաջ խորապէս ազգային, ժողովրդային չէ*»[26]՝ գրել է Դեմիրճեանը: Ապա խօսելով Ախունդովի՝ 1852ին գրած «Հաջի Ղարա» թատերգութեան մասին՝ նա յիշատակում է հայ գիւղացիներին վերաբերող հատուածները, ընդգծում վերջիններիս հանդէպ ադրբեջանցի գրողի համակրանքի պարագան եւ եզրակացնում. «*…հայ գիւղացիներին հանդէս բերելով՝ Ախունդովը առաջ է քաշում աշխատաւորութեան սոցիալական ազատագրման եւ ազգութիւնների համերաշխութեան խնդիրները*»[27]:

Նորայայտ ձեռագրում կարդում ենք, թէ հայերի դէմ վրացական եւ ադրբեջանական թշնամութեան կրողները ոչ թէ կամ ոչ այնքան ժողովուրդներն են, որքան՝ քաղաքական վերնախաւը, որի դերը շատ դէպքերում աւելի վճռական է, քան բուն ժողովրդինը: Դեմիրճեանը կարծես բանաձեւում է իր ժողովրդի ճակատագրին առնչուող պատմական շրջադարձային իրադարձութիւնները եւ դրանց հետեւանքները:

Ապաւինելով նեղ ազգային սահմաններից դուրս եկող վերլուծութիւնների ընթացքին՝ նա տալիս է իր գնահատականը ողջ անդրկովկասեան տարածաշրջանին ու դրանում կատարուած, կատարուող անցուդարձերին՝ եզրակացնելով, որ «կուսական» վայր չէ Անդրկովկասը, անգամ՝ Կովկասը. այն «*՝ռազմաքաղաքական աքցիաների՝ վայր է*»:

Այս իրողութիւնները հանգիստ չեն տուել գրողին ո՛չ այս անաւարտ նիւթը շարադրելիս, ո՛չ դրանից առաջ, ո՛չ դրանից յետոյ: Յիշենք նրա հրապարակային ելոյթները: «Դարաւոր Բարեկամութեան Պատմութիւնից» յօդուածը[28], գրուած 1953ին, նուիրուած՝ Յովհաննէս Թումանեանի մահուան 30ամեակին: Դեմիրճեանն իր խօսքում մէջբերում է մեծ լոռեցու 1920 Դեկտեմբերի 18ին դստերը՝ Աշխէն Թումանեանին գրած նամակից հետեւեալ հատուածը. «*Մեր ապագան, ինչպէս միշտ ասել եմ եւ դուք էլ գիտէք, կապուած է Ռուսաստանի հետ, իսկ Ռուսաստանն ինչքան ազատ – էնքան լաւ, թէ՛ մեզ համար, թէ՛ աշխարհքի*»[29]: Ապա փաստում է, որ Ռուսաստանին միանալուց յետոյ Անդրկովկասում վերջ է դրուել այդտեղ ապրող ժողովուրդների ֆիզիկական բնաջնջման վտանգին:

Սակայն այն, ինչ նա չէր կարող ասել հրապարակային ելոյթի, տպագիր յօդուածի կամ գրական ստեղծագործութեան պարագայում, գրում էր խորհրդային գրաքննութեան ամենատես աչքից հեռու, մանր կտրատուած ու հիմա արդէն խունացած թերթիկների վրայ՝ մատիտով, ինչպէս որ պարտադրում էին իր կեանքի պայմանները: Եւ քանի որ այստեղ նա առաւել անկեղծ ու համարձակ էր ինքն իր ու այն ընթերցողի հետ, որին երբեւէ պիտի հասնէին այդ թերթիկները, ուստի բաց է անում բոլոր փակագծերը: Նա յայտարարում է, որ ո՛չ վրացիները, ո՛չ ադրբեջանցիները տաճիկների հետ վերջին հարիւր տարուայ ընթացքում որեւէ լուրջ «արեան պատմութիւն» չեն ունեցել այնպէս՝ ինչպէս հայերը: Հետեւաբար Անդրկովկասի այս երեք ժողովուրդները միանգամայն տարբեր վերաբերմունք ու դիրքորոշում են ունեցել Տաճկաստանի նկատմամբ:

Մինչ այս ձեռագիրը՝ հայ ժողովրդի ձգտումների, հայի մասին Դեմիրճեանի դատողութիւններն իրենց ամփոփ արտայայտութիւնն էին գտել վերոյիշեալ «Հայը» խոհագրութիւնում, որը գրողի երկերի ակադեմիական հրատարակութիւնում զետեղուած է բաւական աղճատուած: Ահա այդ խոհագրութեան անաղարտ տարբերակից մէջբերուող հետեւեալ հատուածում հոծ տառերով առանձնացուած են 1978ին տպագրուած օրինակից դուրս մնացած տողերը. «*Ուր յեղափոխութիւն՝ այնտեղ հայութիւն: Բայց իբրեւ 'ական'՝ ծայրայեղական է: Իր կռիւը երեք ճակատի վրայ էր միաժամանակ: Շահի դէմ, Սուլթանի դէմ, Ցարի դէմ: Ասենք՝ ամէն հայ մի փոքր շիրակեցի է Դոն Քիշոտի պէս: Կոտորածներից ամենազարհուրելին ինքը տեսաւ եւ ինքն էր, որ չխրատուեց:* ***Իր օրիէնտացիան***[30] ***բացակայի օրիէնտացիան է: Թաթա՞րն էր մօտը՝ սպասեց ռուսին, ռո՞ւսը եկաւ՝ աչքը եւրոպացուն էր: Եկա՞ւ անգլիացին՝ դարձեալ ռուսին էր սպասում: Ռո՞ւսն է գալիս՝ չի ընդունում... Ուրեմն իր պետութի՞ւնն է ուզում ստեղծել, չի՞ ուզում ստեղծել, ի՞նչ իմանաս... Մի ձեռը ճանկռտելով հիմնում է այդ պետութիւնը, միւս ձեռը ճիգ է անում հիմքից քանդելու»*[31]:

Այս ծայրայեղական, բացակայի կողմնորոշումը որդեգրած հայը, սակայն, ունի մի հաստատուն, կայուն արժէք՝ հայրենի հողը: Եւ այս արժէքի բացարձակութեան մասին հաւաստիացումները բազմաթիւ են Դեմիրճեանի թէ՛ գեղարուեստական, թէ՛ հրապարակախօսական գրուածքներում: Յիշենք «Երկիր Հայրենի» դրամայի հերոսուհուն՝ գեղջկուհի Եղիսային, իր պատգամով. «*...կ'անիծե՛մ ձեզ՝ թէ ուրացել էք հող, ուրացել երկիր, չլինելու բան է, հող չ'ուրացուի՛ր, հող սո՛ւրբ է*»[32]:

Հողի հանդէպ հասարակ հայ մարդու պաշտամունքի, հայրենի հողի յաւերժ լինելութեան հաւատի մէկ այլ գեղարուեստական դրսեւորման հանդիպում ենք 1905-12ին գրուած «Լենկ Թեմուր» վիպերգում, որում, իբրեւ գործողութիւնների կատարման վայր (կարծում ենք՝ ոչ-պատահականօրէն), յիշատակւում է այսօր բոլորիս քաջ յայտնի ու արցախեան

պատերազմից յետոյ միջազգային քննարկումներում շատ աշխուժօրէն շրջանառուող մի տեղանուն՝ Աղդամ: Վիպերգի հերոսը՝ 90ամեայ իմաստուն Օհան ծերունին, աշխարհակալ Լենկ Թեմուրի առջեւ հանդէս է գալիս սուր եւ համարձակ խօսքով.

«Ինչպէս իր շղթան կտրած փոթորիկ՝
Թռչում ես, գիտեմ, ցամաք ու ալիք,
Եւ անվերջ զօրքով հեղեղ ու հեղեղ
Անցնում ես աշխարհ մահի պէս ահեղ,-
Բայց վերջը էլի՛ այս երկրի ռայան
Կը հերկէ գութնով քո վերջին կայան»[33]:

Ու հասկանալի է, թէ ինչու՛ են այս խօսքերը մեծապէս ազդում աշխարհը նուաճած ու ծնկի բերած բռնակալի վրայ, որ խոստովանում է.

«Ես չէի՞ Հինդու գլուխը կերայ,
Մոսկովի ձայնը կտրեցի, տարայ,
Եւ չէ՞ր այս սրով, որ Կասպից դռան
Ալիքներն ամէն ինձ գերի դառան.
Բայց տեսէ՛ք ահա որ ցե՛ղն է անարգ
Փչելու մի օր իմ փառքիս ճրագ»[34]:

Այս մտավախութիւնն ունեցել են եւ ունեն հայ ժողովրդի բոլոր ախոյեանները բոլոր ժամանակներում: Դեմիրճեանը քաջ գիտակցել է սա եւ փաստերով ամրագրել իր նորայայտ դատողութիւններում: Բայց եւ չի անտեսել այն անհերքելի ճշմարտութիւնը, որ յաճախ հենց հայերի մէջ է մեր ախոյեանը, մեր ամենավտանգաւոր թշնամին: Ասուածի վկայութեանը հանդիպում ենք նաեւ «Դատողութիւններ Ղարաբաղի Եւ Նախիջեւանի Հարցի Շուրջ» խոհագրութեան մէջ: Դեմիրճեանն իր անաչառ գնահատականներում մեր օտարազգի թշնամիների (Վեհիբ[35], Բաղիրով, Բերիա[36], ուրիշներ) կողքին յիշատակել է նաեւ ստեղծուած կացութեան մէջ մեղաւոր դաշնակցական ու բոլշեւիկ ազգակիցներին:

Եւ զարմանալիօրէն Ի. դարասկզբին հայութեան համար բախտորոշ այս արծարծումների էջերում երկտողեայ գրառում է կատարել Վասակ Սիւնեցու մասին:

Փաստօրէն, հայ ժողովրդի ճակատագրի շուրջ դատողութիւնները գրողին զբաղեցրել են ոչ միայն իր ապրած ժամանակների, այլեւ պատմութեան ողջ ընթացքի կտրուածքով, եւ նա դրանց անդրադարձել է ոչ միայն իր հրապարակախօսական գրուածքներում, այլեւ գեղարուեստական երկերում: Յիշենք *Քաջ Նազար* թատերգութեան մէջ Նազարի եւ Թամադայի երկխօսութիւնը, վերջինիս յայտնի գանգատը եօթ հսկաներից. *«Չեն ուզում իրենց աշխարհքը մեզ տան»*[37]: Արդեո՞ք այս տողում չէր ամբարուած 1950ականներին գրուելիք խոհերի եւ առհասարակ դեմիրճեանական ողջ աշխարհայեացքի էութիւնը:

Դեմիրճեանը մեծապէս կարեւորում էր հայ ժողովրդի մարտունակութեան, ռազմական գործում ունեցած յաջողութիւնների փաստը: Այդ փաստի հաւաստիացումներին նա հետամուտ էր իր ողջ ստեղծագործական կեանքի ընթացքում՝ սկսած վաղ շրջանում գրուած «Լենկ Թեմուր» պոէմից մինչեւ *Վարդանանք* եւ՝ բազում հրապարակախօսական գրքրուածքներ: Նա ունէր պատճառներ, քանզի կար ժամանակ, երբ հայ ժողովրդին ոչ թէ պիտակաւորում էին «ագրեսոր»[38] բնորոշիչով այլ՝ վեհերոտ ու մարտադաշտում կռուելու անընդունակ: Այս մեղադրանքները յատկապէս լայնօրէն շրջանառւում էին Բ. Համաշխարհային Պատերազմի տարիներին: Այսպէս մտածողներին հակադարձելու մղումով Դեմիրճեանը 1943ին գրեց «Հայ Հերոսական Ժողովուրդը» յօդուածը, որում մասնաւորապէս ասուած է. «*Վեհերոտութեան մեղադրանքը հայ ժողովրդի հասցէին կա՛մ անգիտութիւն է նրա պատմութեան, կա՛մ դա չի վերաբերել բուն հայ ժողովրդին: Այդպէս կարծողները չեն ուսումնասիրել հայ ժողովրդի պատմութիւնը, չեն լուսաբանել այն հարկ ու պատշաճ ձեւով:*

Ո՛չ, հայ ժողովուրդը կռուող ժողովուրդ է:

Հպարտութիւն է ծնում մարդու մէջ, երբ մտածում ես, թէ ինչպէս ապրեց ու վերապրեց այս ժողովուրդը: Բնականն ու հնարաւորն այն էր, որ նա իսկապէս չպիտի ապրէր: Բայց եւ հրաշքով չէ, որ նա ապրեց: Ապրեց նա, դիմացաւ՝ ունենալով դրա ուրիշ հիմքերն ու պատճառները»[39]:

Նոյնանման մտքեր են արտայայտւում նորայայտ ձեռագրում:

Բայց եւ այնպէս, Դեմիրճեանն իր ողջ էութեամբ հակոտնեայ էր պատերազմ երեւոյթին, որի գրաւոր ապացոյցներն անհաշիւ են նրա թողած ժառանգութեան մէջ: 1942ին գրուած մի յօդուածում կարդում ենք. «*Ոչ մի ժողովուրդ չի սիրում պատերազմ: Պատերազմները խախտում են ժողովրդի նորմալ, ստեղծագործական կեանքը*»[40]: Նոյն այս միտքն է արծարծւում իր տուն-թանգարանում պահուող ձայնագրութեան[41] մէջ, որտեղ նա դատապարտում է ֆաշիստական յարձակումը: Հետեւաբար, իր ժողովրդի մարտական յաջողութիւնների մասին այդքան յաճախ խօսող մտաւորականը շատ աւելի երջանիկ պիտի լինէր, եթէ կեանքը չպարտադրէր նրան զբաղուել նմանօրինակ խնդիրներով: Բայց քանի որ իրականութիւնն այն էր, ինչ որ էր, ուստի Դեմիրճեանն իր պատճառաբանուած ու արդարացի բողոքն է հնչեցնում հայ ժողովրդի հանդէպ տարուող հետեւողական, նպատակային ճնշումների առնչութեամբ: Եւ գիտակցում է, որ այդ ամէնն արւում է խորհրդային ղեկավարութեան լուռ համաձայնութեամբ: Ուրեմն եւ հասկանալի է, թէ ինչու խորհրդային աթէիզմի գերակայութեան պայմաններում իր օրագրում կատարած գրառման մէջ նա հայ ժողովրդի փրկութեան յոյսը կապում էր Աստծոյ հետ: Դեմիրճեանը, ինչպէս եւ վայել է խորագէտ, իմաստուն իւրաքանչիւր հայի, գիտակցում էր, որ հայ ժողովրդի փրկութիւնը Աստծոյ եւ հենց ի՛ր իսկ ձեռքերում է:

Ըստ նրա՝ Աստուած մշտարթուն ու անդաւաճան ապաւէնն է հայի: Այս հաւատի վկայութեանը հանդիպում ենք գրողի բազմաթիւ ստեղծագործութիւններում: Ահա մի քաղուածք «Լենկ Թեմուր» վիպերգից.

«–Մե՛ծ է վերեւ աստուածն հայի,–
Խօսեց Օհան ծերունին.–
Թէ որ վերից նա չնայի՝
Վայն է տարել մեր հային»[42]:



Նորայայտ ձեռագիրը

Ուստի պատահական չէ, որ նա իր թողած գրական ժառանգութեան անհաշիւ էջերում մշտապէս յուշել, յիշեցրել է հենց այս ճշմարտութեան մասին: Պատահական չէ, որ հայոց պատմութեան ստուար ծալքերից պեղել ու իբրեւ ստեղծագործութեան նիւթ դուրս է բերել յատկապէս հայ եկեղեցու կողմից սրբացուած երկու այրերի, հայ հոգեւոր արժէքների, հայ հաւատի, հայ հողի երկու նուիրեալների՝ Վարդան Մամիկոնեանի եւ Մեսրոպ Մաշտոցի կերպարներն ու նրանց մասին պատմութիւնները՝ վաւերացնելով դրանք *Վարդանանք* եւ անաւարտ *Մեսրոպ Մաշտոց* պատմավէպերում: Յիշենք Աւարայրի ճակատամարտում Վարդանի խորհրդածումը. «*Հայոց ժողովուրդը գործում էր իր գերագոյն ճիգը – փրկում էր իրեն… Դաժան էր այդ ճիգը, անգութ, եւ դրա մէջ էլ էր նրա գերագոյն իմաստութիւնը: - Փրկութիւնը*»[43]:

Այո՛, Դեմիրճեանը ճանաչում էր հայի փրկութեան երկու գործօն՝ Աստուած եւ ժողովուրդ, ոչ թէ նորայայտ ձեռագրում ի՛ր իսկ մատնանշած ու խորհրդային իշխանութիւնների համար միանգամայն ընդունե-լի

բոլշեւիկեան կարգախօսներ, որոնց հարկադրաբար ձօնուած ներբողներն այս շարադրանքում, համոզուած ենք, առաւելապէս իր անձն ապահովագրելու նպատակին էին միտուած՝ ձեռագիրը յայտնաբերուելու հնարաւոր պարագայում: Չէ՞ որ նոյն այդ խորհրդային իշխանութեան աչքի առաջ, բոլշեւիկեան կարգախօսների ներքոյ էին իրականացւում հայատեացութեան անթաքոյց դրսեւորումները, որոնք դեմիրճեանական դատողութիւններում ստացել են իրենց ամփոփ ձեւակերպումը:

Այս նիւթը վկայութիւնն է այն անհերքելի ճշմարտութեան, որ իւրաքանչիւր իսկական մտաւորական նախ եւ առաջ իր հայրենիքի, իր ազգի մտահոգութիւնների, ցաւերի, իհարկէ նաեւ՝ ձեռքբերումների ու յաղթանակների կրողն է:

Երբ նոր էր բարձրացել արցախեան ազատագրական պայքարի ալիքը, գրական աշխարհի տարբեր ներկայացուցիչների հետ զրուցելիս հարցուփորձ էի անում, թէ երբուանի՛ց է այս հարցը բարձրաձայնուել հայ գրական միջավայրում, ովքե՛ր են եղել այս գաղափարի համարձակ առաջամարտիկները հայ գրողներից: Սկզբում հատուկենտ անուններ էին յիշատակւում, յետագայում խնդրի առնչութեամբ շրջանառուող անունները շատացան. այլեւս անվտանգ էր հնչեցնել դրանք, եւ ի թիւս արժանիների, փառքի դափնիներն իրենց ուսերին էին առնում նաեւ որոշ անարժաններ: Բայց երբեք ոչ մէկը չի տուել Դեմիրճեանի անունը. հեռաւոր կասկած անգամ չեն ունեցել հայ գրողները, թէ 1950ականների անապահով տարիներին իրենց ռահվիրան կարող էր ոչ միայն մտածել, այլեւ գրել այն ճշմարտութիւնների մասին, որոնք մենք օրնիբուն արծարծում ենք ահա արդէն քառորդ դար՝ 1988ից սկսած:

Հարկ է նաեւ արժանին մատուցել ձեռագիրը մշակած Պարգեւուհի Սիմոնեանին, ով բարեխղճօրէն համակարգել ու ոչ-պատահականօրէն «սեւագրութիւններ»ի բաժնում ապահովաբար թաքցրել է ձեռագիրը, թէեւ դա նաեւ իր համար անվտանգ չէր այն ժամանակներում:

Ստորեւ ներկայացնում ենք Դեմիրճեանի «Դատողութիւններ Ղարաբաղի Եւ Նախիջեւանի Հարցի Շուրջ» խոհագրութիւնը՝ համապատասխան ծանօթագրութիւններով:

Ձեռագիրը, ամբողջական շարադրանքից բացի, ներառում է նաեւ ածանցեալ գրառումներ, որոնք արուել են տարբեր թերթիկների վրայ, բուն շարադրանքի դարձերեսին կամ լուսանցքներում: Դրանք մենք ներկայացրել ենք առանձին ենթաբաժնով:

Կարծում ենք, որ այս նիւթն առաւել լիարժէք կը դարձնի մասնագէտների եւ գրասէրների պատկերացումները մեծ դասականի մասին:

Ի՞նչ բան է «Ղարաբաղը»:

Սա մի հարց է, որին պէտք է պատասխանել: Հասարակ հարց կարելի է համարել, հարցնել եւ պատասխանել:

Երեւի Ղարաբաղը գոյութիւն չունէր՝ իբրեւ հարց (ո՛չ՝ պրոբլէմ[44], այլ հարց, հարցմունք):

Այսինքն՝ մինչեւ 1918 թիւը: Դա ցարական պետութեան մէջ գտնուող մի շրջան էր, ուր ապրում էին բնակչութեան համարեայ հարիւր տոկոսը կազմող հայեր: Դա, ըստ տէրիտորիալ[45], էթնիկ[46] փաստի, հայերինն էր:

Հարցը յետոյ՝ 18 թուին ստեղծուեց: Ո՞վ ստեղծեց:

Տաճիկ հրամանատարութիւնը՝ Բաքու արշաւելու նախօրեակին: Նա Ալէքսանդրապոլում կարգադրեց Խատիսովին, որ Ղարաբաղը մտնի Ադրբէջանի սիստէմի[47] մէջ:

Ինչո՞ւ՝ անպատճառ Ադրբէջանի սիստէմի մէջ. ի՞նչ 'osobiy zakaz'[48] էր: Հասարակ պատասխան. դա տաճկական հրամանատարութեանը պէտք էր:

1) Երբ կատարուեց տաճկական հրամանատարութեան հրամանը, կատարուեց Տաճկաստանի նոյն պահի, ասենք, ժամանակաւոր պլանը[49]: Ի՞նչ: Ասենք՝ չգիտենք:

2) Երբ արդէն սովետականացուել[50] էր Անդրկովկասը, եւ Նարիմանովը յայտարարեց, որ Ղարաբաղը վերադարձւում է Հայաստանին, ինչո՞ւ տաճկական կառավարութիւնը արգելք դրեց: Ասենք՝ ժամանակա-ւոր պլանը դեռ մնում էր: Տաճկաստանի ցուցմունքն ընդունուեց. Ղարաբաղին ձեռք չտուեցին: Ինչո՞ւ: Ասենք՝ Ղարաբաղը պէտք էր Տաճկաստանի 1918-ի պլանին: Ուրեմն պլանը ժամանակաւոր չէր կամ երկարացուեց:

Եւ այժմ, որ իբրեւ չպիտի ձեռք տրուի Ղարաբաղին, կը նշանակի պիտի մնայ 'ժամանակաւոր պլանը': Դա պէտք է Տաճկաստանին:

Եզրակացութիւն: Ղարաբաղը տաճկական զակազ[51] է. ժամանակաւոր չէ, այլ մշտական, եւ ով պաշտպանում է Ղարաբաղի ներկայ ստատուսը[52], նա պաշտպանում է 18 թուի ստատուսը: Նա ընդունում է տաճկական օրիէնտացիան: 'Նա'-ն այստեղ պէտք է համարել նրան, ով պաշտպանում է, ով գիտի եւ ընդունում է, որ դա տաճկական օրիէնտացիա է: Թող հրապարակ գայ այդ 'նա'-ն եւ բարձրաձայն յայտարարի: Չի՞ յայտարարում բարձրաձայն: Միեւնոյն է. 'նա' ցածրաձայն ընդունում է տաճկական օրիէնտացիան: Որովհետեւ տրամաբանութիւնը տանում է այդտեղ՝ իր երկաթէ ուժով:

Այո՛, ընդունում է, հանդուրժում է, ենթարկւում է՝ հաճութեամբ, զիջելով, ստիպուած:

Կարո՞ղ է մի պլան վնասակար լինել տանողին եւ պաշտպանուել նրա կողմից: Ո՛չ: Ուրեմն Ղարաբաղի պլանը օգտակար է եւ պաշտպանում է: Բաց անենք քարտերը. Ղարաբաղը պէտք է Տաճկաստանին եւ Ադրբէջանին: Հետեւապէս այդ օրիէնտացիան պէտք է: Իսկ եթէ պէտք չէ, թող վերականգնուի հին ստատուսը՝ էթնիկական Ղարաբաղը միանայ իր էթնիկական ազգակցին՝ Հայաստանին: Դա են պահանջում սովետական իդէոլոգիան[53], լենինիզմը եւ պրոլետարութիւնը:

Ով դէմ է, կողմնակից է տաճկական օրիէնտացիային:

Կարելի՞ է այժմեան պայմաններում պահանջել Ղարաբաղը: Ո՛չ՝ կ'ասեն: Ե՞րբ կարելի կը լինի: Երբ իրենք՝ ադրբէջանցիները կամենան: Ե՞րբ կը կամենան: Երբե՛ք: Ուրեմն՝ այս օրս նոյնարժէք է, ինչ որ երբեւէն:

Կարելի՞ է այնպէս անել, որ յօժարութեամբ վերադարձնեն Ղարաբաղը: Այո՛, եթէ Ղարաբաղի պաշտպանները՝ մուսաֆաթիստները, վերանան եւ առաջ գան լենինիստները:

Կը լինի՞ այդ: Ես չգիտեմ:

Ղեկավարութիւնը (Շահումեան, Ֆիոլետով, Ազիզբեկով, Ջափարիձէ[54] եւ մնացածները) Բաքուում ստեղծեց այնպիսի տրադիցիա[55], որ Բաքուն դարձրեց բոլշեւիզմի միջնաբերդը Անդրկովկասում: Եւ թէպէտ վեց ամսուայ հերոսական դիմադրութեան վերջում պարտուեց Բաքուն, բայց նրա ստեղծած տրադիցիան հիմք դարձաւ Հիւսիսային Կովկասից Բաքու արշաւող բոլշեւիկեան զօրամասերի համար՝ մտնելու Բաքու եւ ստիպելու մուսաֆաթական զօրքին չդիմադրել:

Փաստ է, որ Բաքուի բանուորութեան մեծամասնութիւնը հայեր էին, Բաքուում հաւաքուել էին գերմանական եւ աւստրիական ճակատներից տուն վերադարձած հայ (մեծ մասամբ՝ գիւղացի) զինուորները: Եւ (չնկատուած (!) փաստ) Ղարաբաղի գիւղացիների յաղթական դիմադրութիւնները տաճկական կանոնաւոր զօրամասերին թուլացնում էին Բաքու գնացող տաճիկ զօրամասերի պաշտպանական ուժը:

Չնկատուած է մնացել մի շատ կարեւոր փաստ. Բաքուի հետ միասին Ղարաբաղի հայ ժողովուրդը եւս ռուսական օրիէնտացիա ունէր: Փաստ է, որ նրանք չկամեցան միանալ դաշնակցական Հայաստանին, որի օրիէնտացիան անգլօ-ամերիկեան էր: Այնպէս որ, վերոյիշեալ երկու փաստը պէտք է գնահատել հետեւեալ կերպ. Բաքուի հետ միաժամանակ ռուսական օրիէնտացիա է ունեցել նաեւ Ղարաբաղը. նա անգնահատելի ծառայութիւն է մատուցել Բաքուին եւ ռուսական գաղափարին. նախ՝ կռուելով տաճիկների դէմ իր լեռներում եւ երկրորդ՝ չի միացել դաշնակցական աւանտիւրային[56] եւ յարել է ռուսների գործին, որով եւ չի թուլացրել ռուսական գործը Անդրկովկասում, այլ ուժ է տուել (podderjka)[57]: Եւ սրանից յետոյ պէտք է այլեւս ասել՝ Բաքու-Ղարաբաղի դիմադրութիւն: Կ'աւելացնէի նաեւ՝ Զանգեզուրի:

Ծանօթութիւն. Ահա, թէ ինչ նշանակութիւն ունէր եւ ունի Ղարաբաղը տաճիկ զօրահրամանատարութեան աչքում: Ղարաբաղը եղել եւ մնում է իբրեւ աչքի փուշ Տաճկաստանի համար: Դեռ Անդրկովկասի դռների մօտ դէպի Բաքու արշաւանքը ծրագրող տաճիկ հրամանատա-րութիւնը ճիշտ հասկացաւ ու բարձր գնահատեց Ղարաբաղի այդ ռազմաքաղաքական նշանակութիւնը: (Փոքրկովկասեան լեռնաշղթայի միջնաբերդ, կռուող (հայ) ժողովուրդ՝ ռուսական հին օրիէնտացիայի ստեղծողը եւ հաւատարիմ պահողը): Ալեքպոլի դաշնագրութեամբ Ղարաբաղը հանուեց Հայաստանից եւ կցուեց Ադրբէջանին: Քեմալական Թիւրքիան դիմադրեց 22 (?)-ին Նարիմանովի 'առաջարկին'՝ Ղարաբաղը վերադարձնել Հայաստանին:

Ինչո՞ւ չվերադարձնել Հայաստանին: Ինչո՞ւ յանձնել Ադրբէջանին: Ի՞նչ ապագայ նպատակների համար: Ինչո՞ւ էր եւ է հոգում, որ Ղարաբաղը մնայ Ադրբէջանի ձեռքում: Ինչո՞ւ է վստահում նրան...

Հարցեր, հարցեր եւ հարցեր, որոնց պատասխանը շատ պարզ է նրանց համար, ովքեր չեն վախենում տրամաբանութիւնից:

Իմիջիայլոց, տաճիկները նոր չէ, որ մեծապէս գնահատում են Ղարաբաղը: Նրանք շատ են արշաւել Ղարաբաղ եւ շատ են 'կերել' նրանից: Ղարաբաղը Զանգեզուրի թիկունքն է տաճիկների համար. Զանգեզուրի, որի դռները չկարողացան կոտրել տաճիկները ո՛չ պատմութեան մէջ, ո՛չ 18 թուին, Զանգեզուրի, որին կարող են տիրել՝ թիկունքից հարուածով:

Ո՞վ պիտի հարուածի... Նա մի հարուածող ունի, հնարաւոր մի ագրեսոր. դա Տաճկաստանն է:

Մի հանգամանք եւս պէտք է նշել եւ ընդգծել: Տաճկական կառավարութիւնը բնաջնջեց իր պետութեան մէջ ապրող հայութեանը: Եթէ իր 'պատիժը' վերագրում էր իրեն հպատակ հայերին, ապա ինչո՞ւ կոտորեց Ախալքալաքի, Լենինականի, Շիրակի, Փամբակի, Բաքուի հայութեանը: Ինչո՞ւ է մտադրուել բնաջնջել [հայերին] նաեւ Անդրկովկասում: Ի՞նչ պլան էր Անդրկովկասի հայերի բնաջնջումը, որ ծրագրեց Վեհիբ փա-շան՝ 1918-ի գարնանը:

Թիւրքերը յարձակուեցին Անդրկովկասի վրայ: Ծրագիրն էր՝ տիրել այն մինչեւ Բաքու-Դերբենտ եւ իրենց ենթարկել Անդրկովկասի ժողովուրդներին: Նրանք հարուածի օբեկտ ընտրեցին հայ ժողովրդին, որի բնաջնջումը սկսուած էր Թիւրքիայում եւ ծրագրւում էր աւարտել Անդրկովկասում: Հարուածը տրուեց Հայաստանի գծով՝ Լենինական-Կիրովական-Դիլիջան-Ադստաֆա: Թիւրքերին դիմադրեց (ուրեմն) հայ ժողովուրդը: Նրան օգնութեան չհասան մենշեւիկները եւ մուսաֆաթը, եւ հայ ժողովուրդը սրանց, հասկանալիօրէն, չի մեղադրում: Քանի որ հայ ժողովրդի թշնամիների մէջ էին է՛ւ մենշեւիզմը, է՛ւ մուսաֆաթը: Սրանք

բարեկամ չէին նաեւ Դաշնակցութեան, որ անշուշտ, չի նշանակում, թէ Դաշնակցութիւնը հայ ժողովրդի բարեկամն էր:

Ղարաբաղը եւ Նախիջեւանը տաճկական ռազմաքաղաքական պլան է կամ էր: Ով պաշտպանում է Ղարաբաղն ու Նախիջեւանը Ադրբեջանում թողնելու ստատուսը, նա գիտակցաբար, թէ անգիտակցաբար պաշտպանում է այդ պլանը:

Այդ երկրամասերը Հայաստանին վերադարձնելու ուղղութեամբ քայլեր եղել են (Նարիմանովը եւ ուրիշները), բայց վերջը հարցը ճնշուել է եւ լքուել: Ի՞նչն է եղել դրա արգումենտը[58]. երեւի՝ 'վիրաւորանք' հասցնելը Ադրբեջանի ժողովրդին: Հարց: Ի՞նչ է նշանակում այդ 'վիրաւորանքը' սովետական սոցիալիստական պետութիւնների սիստէմում՝ Միութիւնում, եթէ ճիշտ է, որ նա գնում է դէպի կոմունիզմ, եւ եթէ ճիշտ է, որ այս կոմունիզմը պոլիտիկա[59] չէ, մանէօւր[60] չէ, 'ազիտացիա'[61] չէ, պրոֆանացիա[62] չէ, այլ ճշմարիտ մարքս-լենինեան ուսմունքի եւ քաղաքական պլանի արդիւնք, եւ սա՝ անկեղծ, անվերապահ, աներկմիտ եւ ազնիւ:

Ի՞նչ վիրաւորանք հայերի համար, եթէ Աջարիան միացրած է Վրաստանին: Ի՞նչ վիրաւորանք վրացիների համար, եթէ Ղարաբաղն ու Նախիջեւանը միանան Հայաստանին: Ի՞նչ վիրաւորանք հայերի համար, եթէ պարսկական Ադրբեջանը միացուէր Ադրբեջանին: Ի՞նչ վիրաւորանք կը լինի Ադրբեջանի համար, եթէ Ղարաբաղն ու Նախիջեւանը վերադարձուեն Հայաստանին: Նրանց ինչի՞ն են պէտք Ղարաբաղը եւ Նախիջեւանը:

Եւ ի՞նչ են ներկայացնում Ղարաբաղն ու Նախիջեւանը Ադրբեջանում. երիտասարդութիւնը չի կարող բարձրագոյն կրթութիւն ստանալ իր մայրենի լեզուով. ուրեմն եւ չի կարող Ադրբեջանում մասնակցել ոբակեալ աշխատանքի՝ իր իսկ բուն մարգում: Ղարաբաղի ժողովուրդը մնում է կիսակիրթ. գիւղացին յետ է մնում: Նա պէտք է ադրբեջանականանայ, որ կարողանայ ապրել եւ զարգանալ: Ուրեմն ասիմիլիացիա[63]… եւ այն էլ ինչպիսի...

Ղարաբաղը եւ Նախիջեւանը Թիւրքիայի ագրեսիայի սիմուոլներն[64] են Արեւելքի նկատմամբ. նրա պլացդարմը[65]: Պաշտպանո՞ւմ է Ադրբեջանը այդ պլանը: Եթէ ոչ, այդ դէպքում ի՞նչ վիրաւորանք, եթէ բանակցութեան ժամանակ հաշուի չառնուի այդ հին պլանը:

Թերեւս հարկ կայ սահմանաւորելո՞ւ հայերի պահանջը: Սահմանաւորուել էին իրենց ներկայ սահմանում, բայց ինչո՞ւ փորձեցին եւ սկսեցին հայերի թիւը պակասեցնել: Ես վստահ եմ, որ ինչքան էլ հայերը սեղմուեն, չի դադարելու ճնշումը, չի դրուելու սահման նրանց 'սահմանաւորման': Նրանց կը ճնշեն մինչեւ բնաջնջում: Հայերը պէտք չեն մուսաֆթաական, մենշեւիկեան, ինչպէս նաեւ թիւրքական որեւէ պլանի, այլ

խանգարում են նրանց՝ իբրեւ ռուսական յենասիւն, եւ նրանք կռւում են ոչ 'հայերի' դէմ, այլ 'ռուսների' դէմ Անդրկովկասում:

Աւելի ուժեղ յենասիւն կը ստեղծուէր Ղարաբաղի, Նախիջեւանի եւ Հայաստանի միացումից. Այսինքն՝ աւելի ուժեղ յենասիւն կը ստեղծուէր ռուսական օրիէնտացիայի համար Անդրկովկասում: Չէ՞ որ այն ժամանակ, երբ ռուս զօրքերը հեռացան Անդրկովկասից (1918թ.), Բաքուն, Ղարաբաղը եւ Նախիջեւանը (ժողովուրդը) պաշտպանեցին ռուսական օրիէնտացիան, որով եւ մեծապէս օգնեցին ռուսական ռեւոլիւցիային[66] (բոլշեւիկներին, 'ռուսներին'): Եւ եթէ այն ժամանակ, այն պայմաններում դա կարողացան, ուրեմն որքա՛ն կարող են ներկայ պայմաններում, երբ Անդրկովկասում աւելի ուժեղացել է <u>հայ, վրացի եւ ադրբէջանցի բուն ժողովուրդների</u> համակրանքը դէպի <u>ռուս ժողովուրդը</u>:

1918-21-ի դէպքերի ծաւալը չէ, որ մեծ է: Ինչին է այն խոշոր դէպքերի համեմատութեամբ, որ տեղի ունեցան Ռուսաստանում: Նրանք ծաւալուն են իրենց քաղաքական (ներքին եւ արտաքին) նշանակութեամբ: Դրանք համակովկասեան ծաւալ ունեցան: Այդտեղ գործում էին անգլօ-տաճկական ագրեսիան եւ ինտերվենցիան[67], որ նպատակ ունէին գրաւել Կովկասը, համեստ դէպքում՝ Անդրկովկասը: Դրա գոհը եղաւ (եւ կը լինի աւելի չարաբախտօրէն) հայ ժողովուրդը, որը <u>միայնակ կանգնեց տաճկական զօրքերի դէմ՝ Էրզրումից մինչեւ Բաքու</u>:

Ի՞նչ պէտք է եզրակացնել սրանից: Ի՞նչ անել: Պէտք է սրանից եզրակացնել, որ խնդիրը մեր շահագրգռութիւնը չէ, որ շահագրգռութիւնը, խնդիրը միայն հայկական չէ, այլ Միութեան շահագրգռութիւնն է Անդրկովկասում: Այդ շահագրգռութիւնը, որ թւում է, թէ իրօք մերն է, ստացուել է պատմականօրէն: (Ռուսական օրիէնտացիա, տաճկական թշնամութիւն: Կարելի է աւելացնել՝ վրացական եւ ադրբէջանական թշնամութիւն):

Իհարկէ, առանձին ուսումնասիրութեան հարց է, թէ իրո՞ք գոյութիւն ունի այս վրացական եւ ադրբէջանական թշնամութիւնը՝ ընդդէմ հայե-րի, եւ ովքե՞ր են դրա կրողները: Ժողովուրդնե՞րը, թէ՞ դրանց ինտելիգենցիան (քաղաքական ինտելիգենցիան): Սա կարեւոր է, բայց աւելի կարեւորն այն է, թէ որքա՞ն վճռական դեր կարող է խաղալ դրանցից այս կամ այն խաւը: Անդրկովկասը ռազմաքաղաքական 'աքացիների' վայր է: Անդրկովկասն անգլօ-տաճկական քաղաքական եւ ռազմական ագրեսիայի վայր է: Անդրկովկասը մի անգամ՝ 1918-ին, բաժանուել է Ռուսաստանից: Անդրկովկասում երեք քաղաքական բուրժուական կուսակցութիւններ՝ մենշեւիկեան, մուսաֆաթական եւ դաշնակցական, Անգլիայի, Ամերիկայի, Գերմանիայի (Եւրոպայի) օրիէնտացիա են ունեցել: Անդրկովկասում երեք ժողովուրդներ քաղաքական (տարբեր թէեւ) հաշիւներ են ունեցել Տաճկաստանի (իմա՝ Անգլիայի, Ամերիկայի, Գեր-

մանիայի) հետ: Կապեր եւ կոնֆլիկտներ[68] են առաջացել Տաճկաստանի, Անգլիայի, Ռուսաստանի հետ: Հայերը կռիւներ են վարել տաճիկների դէմ: Վրացիները եւ ադրբէջանցիները կապեր են հաստատել Տաճկաստանի հետ: Այնպէս որ 'կուսական' վայր չէ Անդրկովկասը, անգամ՝ Կովկասը:

Սրա հիման վրայ կարող ենք դեռ աւելի առաջ գնալ մեր անալիզի[69] մէջ: Այսինքն՝ փաստ է, որ վերջին հարիւր տարուայ մէջ միայն հայերն են, որ տաճիկների դէմ կռուել են՝ Զէյթունից, Սասունից, Էրզրումից սկսած, մինչեւ Բաքու: Իսկ 17-րդ դարից սկսած՝ յատուկ կռիւներ են ու-նեցել հայերը տաճիկների դէմ Զանգեզուրում եւ Ղարաբաղում: Եթէ պատմութիւնը հանգիստ թողնե՞նք՝ իբրեւ '<u>վաղեմութիւն</u>', որ կարելի է 'մոռանալ', իբրեւ մի 'տեսական' ֆակտոր[70]՝ նոր, կենդանի յարաբերութիւնների ֆակտորի դիմաց եւ, ուրեմն, անարժէք կատեգորիաներ[71]՝ 1915-ի Հայկական Զարդը, Աքսորը, կռիւները՝ Էրզրումից մինչեւ Սարդարապատ, Ապարան, Ղարաքիլիսա եւ ապա Ղարաբաղ, Բաքուի պատերի տակ վեց ամիս տեւող կռիւները: Այս ամէնը յայտածելով այն ֆակտորի կողքին, որ ո՛չ վրացիները եւ ո՛չ ադրբէջանցիները տաճիկների հետ այս հարիւր տարուայ ընթացքում ընդհարում չեն ունեցել, աւելացնենք եւ այն ֆակտորը, որ Անդրկովկասի երեք գլխաւոր ժողովուրդնե-րից միայն հայերն են, որ ռուսական նախկին կայսրութեան մէջ ապրում էին երկու պետութեան մէջ, իսկ վրացիները եւ ադրբէջանցիները՝ միայն մի պետութեան մէջ, որ միայն հայերն էին, որ տաճիկների հետ <u>արեան պատմութիւն</u> ունէին, իսկ վրացի եւ ադրբէջանցի ազնուականութիւնը՝ <u>բարեկամական կապեր</u>: Այս բոլորը բացայայտ ցոյց են տալիս, որ Անդրկովկասի ժողովուրդները՝ իրար կողքի, Տաճկաստանի դէմ կանգնած են հիմնաւորապէս տարբեր դիրքաւորման մէջ: Նրանց կենդանի պատմութիւնը իրար վերաբերմամբ հակառակ ուղղութիւն է ունեցել մինչեւ 1920-21 թիւը: Այս թուերին Անդրկովկասը մտաւ այս բոպէի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միութեան սիստէմի մէջ, որով եւ երեք ժողովուրդներն իրենց պատմութեամբ մտան այնպիսի մի բոլորովին նոր վիճակի մէջ, որ պէտք է վերջանային այդ երեքի պատմութիւնները:

Վերջացա՞ն, թէ՞ շարունակուեցին:

Դաշնակցութեան ձեռքը Ռաֆֆի եւ Պատկանեան տալը եղաւ Բաքուից՝ Ամիրխանեանի[72] ձեռքով: Յարութիւնեանի[73] ղեկավարութեան ժամանակ մեզ հարուածել են մեր ձեռքով: Յետոյ մենք եւս անգիտակցաբար հարուածել ենք ինքներս մեզ (դժգոհ մասսա[74] մեր դէմ՝ Ղարաբաղը, Նախիջեւանը, Ախալքալաքը)՝ գցելով այս դժգոհ մասսան Դաշնակցութեան ձեռքը: Տնտեսական հարուածները աւելի խորացրին այս վտանգաւոր դժգոհութիւնը:

Հէնց 18 թուից անգլիացիները, մուսաֆաթիստները յամառօրէն Նախիջեւանն ու Ղարաբաղը գցում էին Ադրբէջանի սիստէմի մէջ: Նրանք ստեղծեցին մի պահի ասած 'պատմական տրադիցիա', հոգեբանութեան եւ վաղեմութեան նման մի բան, որի վրայ պնդելով՝ ամրացրին այն կարծիքը, որ այս երկրամասերը Ադրբէջանինը պիտի լինեն եւ մնան Ադրբէջանի սիստէմի մէջ: Դրան աւելացրին նաեւ վախը եւ լռութիւնը այս հարցերը շարժողների դէմ:

Լենինականում եւ Ախալքալաքում երեւաց այն խաբէբայութիւնը, որով Քեմալական Թիւրքիան վարում էր սովետների հանդէպ իր վարքագիծը: Չեկիստ[75] (անունը մոռացել եմ) գրում է յուշեր իր՝ Լենինականում եղած ժամանակի, դէպքերի մասին (գտնել նրան): Պատերազմի մէջ երեւաց, թէ ինչ բարեկամ է Թիւրքիան մեզ համար. նոյնը եւ՝ ներկայում:

Անգլօթիւրքական ագրեսիան այժմ արտայայտւում է իդէոլոգիական '<…>' մեթոդով: Թիւրքիան ուզում է նոր քեմալական ներկայացում տալ, երբ մենք յաղթենք Ամերիկային: Թիւրքիայի մի նոր վտանգման ժամանակ Ն. Հիքմէթը[76], Մ. Իբրահիմովը[77] պրոբլէմներ են: Յիշենք. 22(?), Բաքուի թիւրք 'բոլշեւիկները', 20-ի վերջերում 'բոլշեւիկ' սպաների արշաւանքը Ղարաբաղի եւ Զանգեզուրի վրայով դէպի Թիւրքիա՝ 'պրոպագանդ[78] անելու, որոնք լաւ 'պրոպագանդ' արին Ղարաբաղում…

(Թիւրքիայի 'կոնստիտուցիոնալ[79] օրիէնտացիան, վիճակը է մշտական պայքար Ռուսաստանի դէմ):

Նոր ֆակտորներ Սովետական Հայաստանում՝ գաղութահայութիւնը եւ նոր հայրենազրկութիւնը: Հարկաւոր է զրկել Դաշնակցութեանն այս հարցին մասնակցելու հնարաւորութիւնից, որով եւ կարող է սնուել նա: Սա մեր Սովետական Սոցիալիստական Միութեան ներքին հարցն է, որ ոչ ոքի չենք զիջի: Սովետական հայրենասիրութիւնը ամենահաստատ եւ կազմակերպիչ ուժն է մեր պետութեան: Ահա դրան էին խփում… նացիոնալիզմի զրպարտանքով:

Նկատելի է, որ Թիֆլիսը ճնշեց եւ խեղդեց բոլշեւիկների ելոյթներն ու ապստամբութեան փորձը, իսկ Բաքուն՝ չկարողացաւ: (Թիֆլիսը՝ մենշեւիկները, Բաքուն՝ մուսաֆաթիստները):

'Կարողանալու', 'չկարողանալու' փաստերը ես դնում եմ խիստ կարեւորութեամբ: Դա ճակատագրական նշանակութիւն ունեցաւ հայ ժողովրդի համար 1918-20 թուերին եւ խիստ կարեւորութիւն է ներկայացնում նաեւ այժմ… քանի որ բոլշեւիզմի ներկայութիւնն ու բացակայութիւնը Անդրկովկասում ունեցաւ եւ ունի ճակատագրական նշանակութիւն հայ ժողովրդի համար: Դա ունէր եւ ունի նշանակութիւն Անդրկովկասի մնացած երկու ժողովուրդների համար եւս: Դա ճիշտ է՝ միայն որոշակի սահմաններում, մինչդեռ հայ ժողովրդի համար՝ բացառիկ, վե-

րին աստիճանի արտակարգ: Ամէնեւին մտադիր չլինելով տենդենցիոզ[80] ու անճիշտ գաղափար կազմել տալ վրացի ու ադրբէջանցի ժողովուրդների՝ դէպի բոլշեւիզմը տածած համակրանքի հարցում՝ ես յարուցում եմ ժողովուրդների օրիէնտացիայի ուժի կարողութեան հարցը: Որքա՞ն կարող էին եւ կարողացան ադրբէջանական եւ վրացական ժողովուրդները պահել բոլշեւիզմը Անդրկովկասում, երբ ռուսական զօրքն ամբողջովին անցաւ Կովկասեան լեռնաշղթայի այն կողմը:

Ես նայում եմ մերկ փաստին: Նրանք <u>չկարողացան</u>, թէեւ, ասենք, <u>կամեցան</u> (այսինքն՝ նրանց մէջ եղած բոլշեւիկները եւ բոլշեւիկացած տարրերը):

<u>Հայ ժողովուրդը միայն</u> կամեցաւ եւ որոշ չափով <u>կարողացաւ</u>: Կարողացաւ՝ Բաքւում: Բաքւում, կազմելով զգալի ուժ, կարողացաւ, ռուս (թուլացած) բոլշեւիկների եւ ադրբէջանական (նոյնպէս թոյլ) բոլշեւիկների գլուխ անցած, պաշտպանել Բաքուն տաճիկների յարձակումից <u>վեց ամիս</u>: Բաքուի այս բռունցքը՝ կոմունարների...[81]

[ԼՐԱՅՈՒՑԻՉ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ[82]]

Վասակը անկախութիւնը, ազատութիւնը եւ [անընթ.] ուզում է <u>իր համար</u>, ինքն է անկախը:

Հայերի վիճակը արտակարգ է եւ բացառիկ: Այդ արտակարգութիւնը ստեղծել են նրա թշնամիները: Հայերն էլ, ի վերջոյ, նպաստել են դրան:

Այդ հայերն են. ի՞նչ օգնութիւն կարող են ցոյց տալ մեզ մեր երկու հարեւանները նեղ օրում, երբ ռուսական զօրամասերը քաշուեն ռազմական անելանելիութեան հետեւանքով: 1) Փոքր նահանջի ժամանակ՝ ապաստարան. 2) Մեծ նահանջի ժամանակ, տաճիկ զօրքի առաջխաղացման ժամանակ

Այս (Այստեղ ձեռագիրն ընհատւում է - Կ.Ռ.):

***

Հայաստանի պոտենցիալը[83], ֆակտորները, նշանակութեան առանձնայատկութիւնը:

Բաքւում վարկաբեկեցին սովետական իշխանութիւնը, պրոֆանացիայի ենթարկեցին բոլոր քաղաքական, տնտեսական արժէքները:

'Մի՛ դիմէք ռուսներին, նրանք ձեզ ոչինչ չեն տայ, բացի ձեզ զոհի նացիա[84] դարձնելուց':

***

1) Անդրկովկասի, աւելի ճիշտ՝ Կովկասի սովետական սոցիալիստական գործին մեծ հարուած է տրուած Բերիայի եւ Բագիրովի դաւաճանական գործունէութեամբ:

2) Ոչ թէ Հայաստանի պաշտպանութիւն (ծիծաղելի կը լինի տանել միայն Հայաստանի պաշտպանութիւն), այլ՝ Փոքր Կովկասի, այլ՝ Անդրկովկասի, եւ ապա՝ Կովկասի պաշտպանութիւն, Բաքուինն էլ:

Հարց. Ամբողջ Կովկասը պէտք է կանգնի Բաքուի պաշտպանութեան համար:

3) Մենք երկու անգամ ռուսներին բերինք (օժանդակեցինք) Անդրկովկաս.

ա) Պիոտր 1-ինին եւ բ) բոլշեւիկներին՝ Բաքու: Այսուհետեւ պէտք է երրորդ անգամ բերենք ռուսական գաղափարը (օրիէնտացիան), որ թուլացել է:

- Մեզ առանձնացրին եւ իրենք էլ մեզնից առանձնացան: Ապա թէ ոչ՝ ինչո՞ւ Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ խցկեցին 'Քուրդիստանը[85]: Ինչո՞ւ Գանձակի եւ Սեւանի միջեւ խցկեցին նորաշէն ադրբեջանական գիւղերը: Ինչո՞ւ խրեցին 'երգնկեանական[86] սեպը Արփաչայի ակունքների ուղղութեամբ:

- Ինչո՞ւ չէին նպաստում ռուսական օրիէնտացիայի ուժեղացմանը եւ դեմոնստրատիւ[87] արտայայտում այդ, որ Թիւրքիան փակի իր ախորժակը: Մուսաֆաթն ու մենշեւիզմը թիւրքական օրիէնտացիա ունեն, ինչպէս նաեւ դաշնակները: Բայց Հայաստանի մէջ թիւրքական օրիէնտացիա չկայ: Մեզ առանձնացրին՝ մի կերպ, իրենք առանձնացան՝ մի այլ կերպ. եւ առաջին իսկ օրից. Զանգեզուրի, Ղարաբաղի, Սեւանի, Լենինականի եւ Արաքսի սահմանագծերը:

Ամբողջ տրագեդիան[88] այն է, որ մի կողմից մեզ լռեցնում են աւելի եւ աւելի, միւս կողմից այնպիսի պրովոկացիաներ[89] են անում, որ մենք պոռթկանք, անհաւասարակշիռ ելոյթներ ունենանք, աւելի եւ աւելի ընկնենք ծայրայեղութիւնների մէջ (Հռիփսիմէն, Մաշտոցը, Կարսը), եւ մեզ մեղադրեն նացիոնալիզմի մէջ այն ժամանակ, երբ մենք ստիպուած ենք լինում ցուցադրել մեր պատրիոտիզմը[90]:

Առհասարակ չգրուած մի օրէնք է դարձել, չպայմանաւորուած համաձայնութիւն՝ միշտ հայերի պատրիոտիզմը դարձնել մեղադրանք՝ նացիոնալիզմ:

Հայ կուլտուրայի որեւէ երեւոյթը նշելը, վեր հանելը, հայ ժողովրդի որեւէ պատմական կամ ներկայի առաւելութիւնը, հայերէն խօսելու ցանկութիւնը եւ այլն որակուել է որպէս նացիոնալիզմ:

Ոչ մի լենինեան դրոյթ, որ հայ ժողովրդի համար եւս գոյութիւն ունի կարծես. հայերի դէպքում նացիոնալիզմ է: Ղարաբաղի պահանջը, Նա-

խիջեւանի պահանջը, Միւալքալաքի համար որեւէ դրութեան պահանջը միշտ համարուել է նացիոնալիզմ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Դերենիկ Դեմիրճեան, *Արջուկ-Լրջուկ*, Երեւան, Հայպետհրատ, 1946:

[2] ԳԱԹ, Դ. Դեմիրճեանի Ֆոնդ, Լրացուցիչ Մատեան, թիւ 145, «Ղարաբաղի Եւ Նախիջեւանի Մասին Իր Դատողութիւնները. Սեւագրութիւններ»:

[3] Ստալինեան բռնատիրութեանը յաջորդած ժամանակաշրջանը (1953-1964), երբ Խորհրդային Միութեան ղեկավարութիւնը ստանձնել էր Նիկիտա Խրուշչովը, համարում են 'ձնհալի' տարիներ, քանզի այս ընթացքում սկսուեցին անհատի պաշտամունքի քննադատութիւնը եւ ստալինեան բռնութիւններին զոհ դարձած անձանց արդարացման գործընթացը:

[4] 1648-1654՝ ուկրաինական ժողովուրդը Զինովի Բոգդան Խմելնիցկու (1595-1657) գլխաւորութեամբ ազատագրական մարտեր էր մղում պանական Լեհաստանի դէմ: Պայքարն աւարտուեց 1654 Յունուարի 8ին Պերէյասլաւում տեղի ունեցած համաժողովում կնքուած պայմանագրով, որը հռչակեց Ուկրաինայի վերամիաւորումը Ռուսաստանին: Խորհրդային Միութեան պաշտօնական տօնացոյցում պատմական այս իրողութեան յոբելեանական տարեդարձը՝ Ռուսաստանի եւ Ուկրաինայի վերամիաւորման 300ամեակը, նշուել է 1954 Մայիսի 22ին:

[5] Պլատոն Վորոնկօ (1913-1988), ուկրաինացի գրող, հրապարակախօս:

[6] Յօդուածը յետագայում տպագրուել է Դեմիրճեանի *Երկերի Ժողովածու*-ում՝ Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 13*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1983:

[7] Յօդուածը հաւանաբար գրուել է Երեւանի ռադիօկոմիտէի պատուէրով՝ Արեւելեան Հայաստանը Ռուսաստանին միանալու 125ամեակի առթիւ: Թուագրուած է 1953 Փետրուարով: 1953ի Փետրուարին հաղորդուել է Երեւանի ձայնասփիւռով, 1969ին յանձնուել է ԳԱԹ եւ առաջին անգամ տպագրուել *Երկերի Ժողովածու*-ում՝ Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 14*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1987, էջ 520:

[8] Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 14,* էջ 520:

[9] Նոյն, էջ 521:

[10] Իսրայէլ Օրի (1659-1711), հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը դէպի ռուսական կողմնորոշում մղող առաջին գործիչը:

[11] Անաստաս Միկոյեան (1895-1978) խորհրդային ականաւոր պետական եւ քաղաքական գործիչ, 1935-1966՝ եղել է ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբիւրոյի (նախագահութեան) անդամ:

[12] Դեմիրճեանի նորայայտ ձեռագրում հիմնականում քննութեան են առնուած հենց այս տարիներին կատարուած բախտորոշ իրադարձութիւնները եւ դրանց հետ այս կամ այն չափով առնչուած անձանց գործունէութիւնը: Այդ ամէնի մասին պատկերացում կազմելու կամ ունեցած պատկերացումներն ի մի բերելու նպատակով հարկ ենք համարում պատմական տարբեր տեղեկագրերից քաղուած համառօտ մի ակնարկ ներկայացնել, որը հնարաւորու-

թիւն կ'ընձեռի առաւել խորութեամբ եւ փաստարկուած ընկալել Դեմիրճեանի դիտարկումներն ու անհանգստութիւնները ձեռագրում բարձրացուած խնդիրների շուրջ: Եւ այսպէս, Առաջին Համաշխարհային Պատերազմի արիւնալի տարիներին, 1915-23ին իրականացուած հայերի ցեղասպանութեան ողբերգական դէպքերին զուգահեռ, Ռուսաստանում ծաւալւում էր յեղափոխական շարժումը: Ներքին քաղաքական խմորումներն իրենց ուղղակի ազդեցութիւնն էին ունենում աշխարհաքաղաքական իրողութիւնների վրայ: 1917ին Խորհրդային Ռուսաստանի կառավարութիւնն սկսում է անջատ հաշտութեան բանակցութիւններն Առաջին Աշխարհամարտի տարբեր ճակատներում: Նրա օրինակին հետեւելով՝ Անդրկովկասի տարածքում կատարուած յեղափոխական գործողութիւների արդիւնքում ձեւաւորուած Անդրկովկասեան Կոմիսարիատը եւս որոշում է զինադադար կնքել թուրքերի հետ: 1917 Դեկտեմբերի 5ին Երզնկայում ստորագրւում է զինադադարի պայմանագիր: Սկսւում է կովկասեան ռազմաճակատից ռուսական զօրքերի զանգուածային հեռացումը: Իսկ դա նշանակում էր, որ հայ ժողովուրդը կրկին կանգնում էր թուրքական ներխուժման սպառնալիքի առաջ՝ մէն-մենակ: Թուրքական զօրքերի յարձակումը չուշացաւ: Կովկասեան ճակատի թուրքական զօրքերի հրամանատար Վեհիբ Մեհմէդ փաշան (տե՛ս՝ ծանօթ. 37) 1918 Յունուարի առաջին իսկ օրերից արշաւեց Հայաստանի վրայ: Այդ ընթացքում թուրք եւ քուրդ մոլեռանդ տարրերը՝ ցեղապետերի ու խաների կողմից ղեկավարուող զինուած հրոսակախմբերով, մի ձեռքով բարձրացնում էին բոլշեւիկեան յեղափոխութեան դրօշը, միւսով հրահրում ազգամիջեան թշնամանք եւ հակամարտութիւն՝ ընդդէմ հայութեան: 1918ին Անդրկովկասեան Սէյմի եւ Թուրքիայի միջեւ կնքուած զինադադարի պայմանագիրը գլխիվայր էր շրջել ուժերի յարաբերութիւնը կովկասեան ճակատում՝ ի նպաստ Թուրքիայի: Արեւմտեան Հայաստանի ազատագրուած տարածքները, ինչպէս եւ Արեւելեան Հայաստանի հեռաւոր շրջանները դարձել էին ազգամիջեան կռիւների թատերաբեմ: Առաջին թիրախը եղաւ Երզնկան, որտեղ ռուս զինուորների հեռանալուց յետոյ միայն հայկական զօրքերն էին մնացել: Թուրքական գրոհին եւ դրան յաջորդած խաղաղ բնակչութեան սպանդին դիմակայելու մտահոգութեամբ զօրավար Նազարբէկեանը հրահանգեց դատարկել Երզնկան: Վեհիբ փաշան հանգիստ մուտք գործեց Երզնկա 1918 Յունուարի 31ին: Նրա առաջխաղացումն ու հայկական զօրքի նահանջը Ապրիլին յանգեցրին այն բանին, որ Վեհիբ փաշան ուղղուեց Ղարաքիլիսա եւ լրջօրէն սպառնում էր հայ ժողովրդին՝ նպատակ ունենալով Անդրկովկասն ամբողջապէս վերցնել թուրքական գերիշխանութեան ներքոյ եւ իրագործել համաթուրքական վաղեմի երազանքը: Այդ ճանապարհին պէտք էր վերացնել ամէն մի խոչընդոտ: Իսկ գլխաւոր խոչընդոտը 'Հայկական սեպն' էր, որը պէտք էր մէկընդմիշտ ընկճել ու բնաջնջել: Այդուհետ Վեհիբ փաշան իր զօրքերը տեղաշարժում է դէպի Սարդարապատ եւ Բաշ-Ապարան: 1918 Մայիսի 22ին հայկական ուժերն սկսում են հակայարձակումը՝ հիմնականում ղարաբաղցիներից կազմուած 5րդ հրաձգային, պարտիզանական հետեւակային եւ Զէյթունի հեծեալ գնդերի մասնակցութեամբ: Հայ զինեալներին յաջողւում է կասեցնել թուրքերի

առաջխաղացումը: Թակարդում յայտնուած թուրքերը Մայիսի 27ի կէսօրին դիմում են փախուստի՝ մարտադաշտում թողնելով հարիւրաւոր սպանուածներ: Թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան յետագայում խոստովանում է, թէ հայերն ապացուցեցին, որ կարող են լինել աշխարհի լաւագոյն զինուորները:

Այս պատմական իրադարձութիւնների խորքին որոշւում էր նաեւ Արցախի ճակատագիրը: Լեռնային Ղարաբաղին առնչուող վէճն սկիզբ էր առել 1917 Հոկտեմբերեան Յեղափոխութեան յաղթանակից յետոյ՝ Ռուսական Կայսրութեան փլուզման եւ Հարաւային Կովկասում երեք պետութիւնների՝ Հայաստանի Հանրապետութեան, Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետութեան եւ Վրաստանի Հանրապետութեան ստեղծման օրերից: Կայսրութեան փլուզումից յետոյ Լեռնային Ղարաբաղը, որի բնակչութեան մօտ 95 տոկոսը կազմում էին հայերը, հրաժարուեց ենթարկուել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետութեան իշխանութեանը: Լեռնային Ղարաբաղի հայերը գումարեցին իրենց առաջին ժողովը, որը Ղարաբաղը հռչակեց ինքնիշխան միաւոր, ընտրուեցին Ազգային Խորհուրդ եւ կառավարութիւն: 1920ին Հայաստանը եւ Ադրբեջանը կորցրին իրենց անկախութիւնը եւ վերածուեցին խորհրդային հանրապետութիւնների: Դրանից անմիջապէս յետոյ՝ 1920 Նոյեմբերի 30ին, Ադրբեջանական ԽՍՀն պաշտօնապէս հռչակեց հայկական հողերի՝ Ղարաբաղի, Զանգեզուրի եւ Նախիջեւանի հանդէպ տարածքային նկրտումներից հրաժարուելու մասին՝ յօգուտ եղբայրական Հայկական ԽՍՀի, որն իրաւականօրէն ամբողջացաւ 1921 Յունիսի 3ի ՌԿ/Բ/Կ (Ռուսաստանի Կոմունիստական Բանուորական Կուսակցութիւն) Կովբիւրոյի միաձայն որոշմամբ: Սրան անմիջապէս հետեւեց միջազգային հանրութեան արձագանգը, որտեղ ողջունուեց Ադրբեջանի կողմից տարածքների վերադարձի ճիշտ քայլը: Եւ արդէն 1920 Դեկտեմբերից Հայաստանի Հանրապետութեան տարածքային կազմը՝ այդ թւում Ղարաբաղը, ներառուած էին Ազգերի Լիգայի մի շարք պաշտօնական փաստաթղթերում: Այդուհանդերձ, 1921 Յուլիսի 5ին հրաւիրւում է Կովբիւրոյի պլենումի արտահերթ նիստ, որտեղ, Ստալինի ճնշման ներքոյ, ընդունւում է իրաւական հիմնաւորում չունեցող որոշում, այն է՝ Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում՝ նրան ընձեռելով մարզային լայն ինքնավարութիւն՝ Շուշի քաղաքում վարչական կենտրոնով: Արցախահայութիւնը խիստ դժգոհ էր մնացել այս ապօրինի որոշումից: Երկար քննարկումներ են սկսւում վիճայարոյց հարցի վերաբերեալ: 1922 Յունուարին Հայաստանի Կոմկուսի Ա. Համագումարում Ալեքսանդր Միասնիկեանն արտայայտում է իր դժգոհութիւնը Անդրերկրկոմում տիրող մթնոլորտից եւ անհամաձայնութիւնը՝ Ղարաբաղի խնդրի նմանօրինակ լուծման վերաբերեալ: Հարցի քննարկումների ծիրում 1921 Յուլիսի 20ին ստեղծւում է մի յանձնաժողով, որը պէտք է մշակէր Լեռնային Ղարաբաղի սահմանադրութիւնը, սակայն Ադրբեջանի քաղաքական ղեկավարութիւնը քայլեր է ձեռնարկում, որպէսզի Լեռնային Ղարաբաղը չստանայ ինքնավարութիւն: 1921 Սեպտեմբերի 26ին Անդրկովկասեան Կոմունիստական Կուսակցութեան Քաղբիւրօն եւ Կազմբիւրօն, քննարկելով ղարաբաղեան հարցը, ընդունում են

որոշում, որի առաջին կէտում նշւում է, թէ պէտք է խնդրել Կովբիւրոյին վերանայել Ղարաբաղն առանձնացնելու մասին որոշումը եւ մինչ այդ չյայտարարել ինքնավարութիւն: Նիստին ներկայ 9 հոգուց այդ որոշմանը դէմ են քուէարկում երկու անդամ՝ Նարիմանովը եւ Բունիաթզադէն: Վերջիններս առաջարկում են ամենակարճ ժամկէտերում իրագործել Կովբիւրոյի որոշումը եւ առանձնացնել Լեռնային Ղարաբաղը՝ իբրեւ ինքնուրոյն միաւոր: Հայ պատմաբանների կարծիքով Ադրբեջանի միջազգայնական համարուող այդ կոմունիստները, մասնաւորապէս՝ Նարիմանովը, նման քայլով նպատակ են հետապնդել ինչ-որ մեքենայութիւնների գնով անհնարին դարձնել Լեռնային Ղարաբաղին ինքնավարութիւն տալու գործը: Աւելի ուշ՝ 1923 Յունիսի 7ի դեկրէտով, ձեւաւորւում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որը եւ խորհրդային ղեկավարութիւնը համարում է լաւագոյն հանգուցալուծումը Ղարաղաբի վիճայարոյց հարցի համար:

[13] Ազգայնամոլութիւն:

[14] Ջաֆար Բագիրով (Բաղիրով, 1895-1956), ադրբեջանցի կուսակցական եւ պետական գործիչ, 1934-1953՝ Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի Ա. Քարտուղար: Վարել է հակահայկական քաղաքականութիւն:

[15] Արկածախնդիր, բախտախնդիր:

[16] Սահակ Տէր-Գաբրիէլեան (1886-1937), քաղաքական, կուսակցական, պետական գործիչ, զբաղեցրել է բարձր պաշտօններ խորհրդային ղեկավար մարմիններում: Զոհ է գնացել ստալինեան բռնութիւններին՝ Բերիայի առաջխաղացմանը համարձակօրէն դէմ արտայայտուելու պատճառով: Ինչպէս Աղասի Խանջեանի դէպքում, նրա մահը եւս ներկայացուել է իբրեւ ինքնասպանութիւն, որ իբր մահացել է կալանավայրի երկրորդ յարկի պատուհանից դուրս ցատկելու հետեւանքով:

[17] Աղասի Խանջեան (1901-1936), կուսակցական, պետական գործիչ, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Ա. Քարտուղար (1930-1936), սպանուել է Թիֆլիսում՝ Բերիայի կողմից: Նրա սպանութիւնը ներկայացուել է իբրեւ ինքնասպանութիւն:

[18] Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 14*, էջ 56:

[19] Թող Տէր Աստուած պահպանի Հայաստանը:

[20] Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 14*, էջ 57:

[21] Ալեքսանդր Խատիսով (1874-1945), եղել է Թիֆլիսի քաղաքագլուխ, Ազգերի Լիգայի Գաղթական Հայերի Կոմիտէի նախագահ: 1918 Յունիսի 4ին Բաթումում կնքւում է 'Հաշտութեան Եւ Բարեկամութեան Պայմանագիր Օսմանեան Կայսերական Կառավարութեան Եւ Հայաստանի Հանրապետութեան Միջեւ', որի տակ ստորագրում են Պետական Խորհրդի նախագահ, առաջին պատուիրակ Խալիլ բէյը, կովկասեան ռազմաճակատի օսմանեան զօրքերի գլխաւոր հրամանատար Վեհիբ Մեհմէդ փաշան՝ Օսմանեան Կայսրութեան, պատուիրակութեան նախագահ Ալեքսանդր Խատիսովը, պատուիրակներ Ռուբէն Քաջազնունին, Միքայէլ Պապաջանովը՝ Հայաստանի Հանրապետութեան կողմից:

[22] Նարիման Նարիմանով (1870-1925), ադրբեջանցի յեղափոխական, քաղաքական, պետական գործիչ, գրող, հրապարակախօս: 1920-21՝ գլխաւորել է Ադրբեջանի խորհրդային կառավարութիւնը, Ժամանակաւոր Ռազմայեղափոխական Կոմիտէն: 1922ին ընտրուել է Անդրերկրկոմի Խորհրդային Միութեան նախագահ:

[23] Զինադաշտ:

[24] Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 14*, էջ 463:

[25] Միրզա Ֆաթալի Ախունդով (1812-1878), ադրբեջանցի գրող, թատերագիր:

[26] Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 13*, էջ 222:

[27] Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 13*, էջ 224:

[28] Տպագրուել է 1953 Ապրիլի 11ին, *Գրական Թերթ*ի թիւ 15ում, ապա զետեղուել Դեմիրճեանի *Երկերի Ժողովածու*ում (*Հտր. 13*, էջ 225):

[29] Դեմիրճեանը մեջբերում է Յովհաննէս Թումանեանի՝ 1920 Դեկտեմբերի 18ին դստերը՝ Աշխէն Թումանեանին գրած նամակից մի հատուած (Յովհաննէս Թումանեան, *Երկերի Ժողովածու, Հտր. 4*, Երեւան, 1969, էջ 415):

[30] Կողմնորոշում, արեւելում:

[31] Դ. Դեմիրճեանի Տուն-Թանգարանի Ֆոնդ, ԳՕՄ (Գիտաաժանդակ Մատեան), թիւ 876:

[32] Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 11*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 353:

[33] Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 1*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1976, էջ 144:

[34] Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 1,* էջ 144-145:

[35] Վեհիբ Մեհմէդ փաշա (Ֆերիկ Վեհիբ, 1877-1940), կովկասեան ռազմաճակատի 3րդ բանակի հրամանատար, հայկական կոտորածների մասնակից եւ կազմակերպիչ: 1919 Սեպտեմբերի 27ից Հոկտեմբերի 30ը Երեւանում գումարուած ՀՅԴ Թ. Ընդհանուր Ժողովը որոշում է իրականացնել հակահայեկչական գործողութիւններ՝ պատժելու համար հայերի ցեղասպանութիւնը կազմակերպած եւ իրագործած երիտթուրքերի պարագլուխներին: Ծայրաստիճան գաղտնիութեան պայմաններում ծրագրուած գործողութիւնը կրում է 'Նեմեսիս' պայմանական անուանումը: Կազմւում է ցուցակ, որը ներառում է 650 յանցագործի անուն: Դրանցից առանձնացւում են 41 գլխաւոր յանցագործներ, որոնց նկատմամբ որոշւում է ի կատար ածել մահապատիժ: Այդ 41 ոճրագործների 'սեւ' ցուցակում 28րդը Վեհիբ փաշան էր:

[36] Լաւրենտի Բերիա (1899-1953), Վրաստանում բոլշեւիկեան յեղափոխութեան ակտիւ գործիչ: 1938ից եղել է ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմ: 1946ին ընդգրկուել է ԽՄԿԿ Գերագոյն Խորհրդի կազմում: Եղել է Ստալինի գլխաւոր աջակիցն ու խորհրդատուն՝ նրա իրականացրած կամայականութիւնների, մասնաւորապէս հակահայկական ծրագրերի իրագործման հարցերում: Ստալինի մահից յետոյ՝ 1953 Մարտին, փորձում է փոխարինել նրան, սակայն խորհրդային ղեկավարութեան ներկայացուցիչների՝ Խրուշչովի, Մոլոտովի, Մալենկովի ջանքերով բացայայտւում են նրա յանցաւոր քայլերը, նա

ձերբակալւում է եւ իբրեւ հակապետական գործողութիւններ իրականացրած յանցագործ՝ մահապատժի ենթարկւում 1953 Դեկտեմբերի 23ին:

[37] Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 10*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 200:

[38] Զաւթիչ:

[39] Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 12*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 280:

[40] Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 12*, էջ 259:

[41] Դերենիկ Դեմիրճեանի Տուն-Թանգարանի Ֆոնդ, Մայր Մատեան, թիւ 659:

[42] Դեմիրճեան, *Երկերի Ժողովածու 14 Հատորով, Հտր. 1*, էջ 129:

[43] Դերենիկ Դեմիրճեան, *Վարդանանք, Երկու Գրքով, Գիրք Բ.*, Երեւան, Հայաստան Հրատ., 1968, էջ 554:

[44] Խնդիր:

[45] Տարածքային:

[46] Ազգային:

[47] Համակարգ:

[48] Յատուկ պատուէր:

[49] Ծրագիր:

[50] Խորհրդայնացուել:

[51] Պատուէր:

[52] Կարգավիճակ:

[53] Գաղափարախօսութիւն:

[54] Ստեփան Շահումեան (1878-1918), Իւան Ֆիոլետով (1884-1918), Մեշադի Ազիզբեկով (1876-1918), Ալիոշա (Պրոկոֆի) Զափարիձէ (1896-1918): Շահումեանը եղել է նախագահը, իսկ միւս երեքն անդամները Բաքւում ձեւաւորուած Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի՝ Բաքուի Կոմունայի: Կոմունայի 26 անդամները գնդակահարուել են 1918 Սեպտեմբերի 20ին՝ հակաբոլշեւիկեան ուժերի կողմից:

[55] Աւանդոյթ:

[56] Արկածախնդրութիւն, բախտախնդրութիւն:

[57] Սատարում (ռուսերէն):

[58] Փաստարկ:

[59] Քաղաքականութիւն:

[60] Խորամանկում:

[61] Քաղաքականապէս ներգործել, համոզել:

[62] Խեղաթիւրում:

[63] Զուլում:

[64] Խորհրդանիշ:

[65] Տե՛ս՝ ծանօթ. 25:

[66] Յեղափոխութիւն:

[67] Մի երկրի բռնի միջամտութիւնը այլ երկրի ներքին գործերին:

[68] Ընդհարում:

[69] Վերլուծութիւն:

[70] Գործօն:

[71] Ստորոգութիւն:

[72] Շաւարշ Ամիրխանեան (1894-1959), հայ յեղափոխական գործիչ, կարեւոր դերակատարութիւն է ունեցել Մայիսեան Ապստամբութեան ժամանակ՝ 1921 Օգոստոս-1924 Մայիս, եղել է Խորհրդային Հայաստանի Ներքին Գործերի նախարար:

[73] Ենթադրում ենք, որ նկատի ունի Գէորգ Յարութիւնի Յարութիւնեանին (1884-1921), որ եղել է ակտիւ յեղափոխական: Բաքուի Կոմունայի, մասնաւորապէս՝ Շահումեանի, Ջափարիձէի ցուցումներով յեղափոխական գործունէութիւն է վարել Բաքուի նաւթահորերի բանուորների շրջանում, 1917-18՝ մասնակցել է պատերազմական գործողութիւնների, բարձր դիրք է զբաղեցրել Խորհրդային Հայաստանի պետական կառոյցներում, սպանուել է 1921ի Փետրուարին՝ դաշնակցականների կողմից:

[74] Զանգուած:

[75] Այսպէս էին կոչւում խորհրդային իշխանութեան առաջին տարիներին ձեւաւորուած անվտանգութեան հարցերով զբաղուող կառոյցի՝ Արտակարգ Յանձնաժողովի անդամները:

[76] Նազիմ Հիքմէթ (1902-1963), թուրք գրող, հրապարակախօս:

[77] Միրզա Իբրահիմով (1911-1993), ադրբեջանցի գրող, հասարակական գործիչ, խորհրդային տարիներին ակտիւ դերակատարութիւն է ունեցել եւ զբաղեցրել բարձր դիրք ինչպէս Խորհրդային Ադրբեջանի, այնպէս էլ Խորհրդային Միութեան կուսակցական կառոյցներում:

[78] Քարոզչութիւն:

[79] Սահմանադրական:

[80] Միտումնաւոր:

[81] Այստեղ ձեռագիրն ընդհատւում է:

[82] Արուել են ընդհանուր շարադրանքից դուրս, առանձին թերթիկների վրայ:

[83] Ներուժ:

[84] Ազգութիւն:

[85] 1923 Օգոստոսի 6ի ադրբեջանական կառավարութեան որոշմամբ ստեղծւում է Կարմիր Քուրդիստանի Ինքնավար Մարզը, որի բնակչութեան 72 տոկոսը կազմում էին քրդերը: 1926ի մարդահամարի տուեալներով՝ այդ տարածքում բնակւում էր 44,193 քուրդ, սակայն կարճ ժամանակ անց այդ թիւն անտրամաբանօրէն սկսում է նուազել: 1936ին այն դառնում է 6000, 1959ին՝1500, 1979ին այդ տարածքում չի հաշուառւում եւ ոչ մի քուրդ:

[86] Ենթադրում ենք, որ Դեմիրճեանը նկատի է ունեցել Երզնկայում ստորագրուած Զինադադարի Պայմանագիրը (տե՛ս՝ ծանօթ. 14): Հնարաւոր է նաեւ, որ նկատի է ունեցել Արամայիս Երզնկեանին (1879-1938), որը եղել է Անդրկովկասեան Սէյմի եւ Հայոց Ազգային Խորհրդի անդամ, եռանդուն դերակատարութիւն է ունեցել անդրկովկասեան ռազմաքաղաքական անցուդարձերին նախախորհրդային եւ վաղ խորհրդային շրջաններում:

[87] Ցուցադրական:

[88] Ողբերգութիւն:

[89] Խոովարարութիւն:
[90] Հայրենասիրութիւն:

DERENIK DEMIRCHYAN'S RECENTLY DISCOVERED MANUSCRIPT TITLED "DISCUSSION ON THE ISSUES OF NAGORNO KARABAGH AND NAKHICHEVAN" (SUMMARY)

KARINE RAFAELYAN
karine.rafaelyan@mail.ru

During research at the Yerevan-based Yeghishe Charents Museum of Literature and Art, where Derenik Demirchyan's literary archive is preserved, the author comes across an unknown manuscript of 24 pages, located in a file titled "Articles, Speeches and Various notes" with the following sub-note: "His Judgments on Nagorno Karabagh and Nakhchivan Matters, Drafts."

Obviously in an attempt to misguide investigators, Demirchyan had jotted the following note on the file: "Everyday Mixed Notes (rather linguistic)" and only at the bottom of the page had he added: "Karabagh."

The manuscript is an overview of the historical events of Transcaucasia in 1918-1923; the relations between its three mainstream peoples, the Armenians, the Azeris and the Georgians; and their political orientation vis-à-vis Russia and the West. Demirchyan argues strongly for the reintegration of Nagorno Karabakh, Nakhchivan and and Akhalkalak with Soviet Armenia.

It seems Demirchyan, a cautious and circumspect person, avoided an eye-catching title to his notes, which would immediately have revealed their nature and provoked accusations of nationalism against him.

Afrter thoroughly investigating the material, Rafayelian concludes that Demirchyan probably worked on these unfinished notes in 1954. Rafayelian identifies certain common grounds between these notes and the literary legacy of Demirchyan.

By publishing the original material, Rafayelian underlines the fact that the demands for the unification of Nagornmo Karabagh with Soviet Armenia started in the very first years of Sovietization and continued throughout the Soviet era.